

Լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 35 կիրակի 13 սեպտեմբերի | ինն երորդ տարի 1898

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԿԻՍԱՄԵԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Լոյս է տեսնում ՏԱՐԱԶԸ շաբաթական ԵՐԵՔ թերթ։

ՏԱՐԵԱՋԻ 6 սմսեայ բաժանորդագինը (յուլիսից-յունուար 99 թ.) հանապարհածախսով 3 ր.

Հասցէ՝ Тифлисъ, редакція иллюстр. жур. АГБЮРЪ-ТАРАЗЪ կամ *Tiflis* (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz.



Ալէքսանդր Ա-ի արձանը

(Հանդիսաւոր կերպով բացուեց Մոսկվայում օգոստ. 16-ին).

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԷՈՒԹԻՒՆԸ

(Օգիւստ Կոնտի ծննդեան հարիւրամեակի առիթով)

Այս տարի լրացաւ ֆրանսիական փիլիսոփայ Օգիւստ Կոնտի ծննդեան հարիւրամեակը։ Այդ առիթով եւրոպական ամբողջ մամուլը, ի միջի այլոց և ռուսականը, ձայն բարձրացրեց, խօսեց, բազմաթիւ յօդուածներ տուեց։ Ոչ մի լրագիր, ոչ մի ամսագիր, ինչ ուղղութեան էլ պատկանէր նա, չը-կարողացաւ լռութիւն պահպանել, այլ իւրաքանչիւրն աշխատեց ցոյց տալ, թէ ինչպէս է նայում ինքը այդ զօրեղ և յանդուգն փիլիսոփայի վրայ, ինչպէս է ըմբռնում նրա աշխարհահայեցողութիւնը, ինչ ուղիղ և սխալ սկզբունքներ է գտնում նրա գաղափարների մէջ։ Եւ ուրիշ կերպ էլ լինել չէր կարող,

որովհետև Կոնտը մարդկութեան այն հազվագիւտ որդիներից մէկն էր, որոնք մտքի պատմութեան մէջ այնպիսի դարագլուխներ են կազմում, որպէս մեծ զօրապետները քաղաքական պատմութեան մէջ։ Կոնտի նմանները ոչ ոքի չեն հրամայում, ոչ ոքի չեն սպառնում, արիւն չեն թափում... այնուամենայնիւ ազգերին ստիպում են վոխել իրանց մտքի և կեանքի ընթացքը ու դնալ նրանց ծրագրած ուղղութեամբ։ Զարմանալի չէ ուրեմն, երբ այդպիսի մի մարդու յիշատակը խօսեցնում է համաշխարհային մամուլին։

Կոնտի մասին դեռ շատ պիտի խօսի մեր մէջ, մենք շատ բան ունենք նրանից սովորելու։ Բայց առայժմ ամփոփ տեղեկութիւն կրտանք նրա նշանակութեան մասին։ Կոնտը իրաւամբ համարւում է, այսպէս անուանած, Հասարակագիտութեան (սոցիոլոգիայի) հիմնադիրը։

Մարդիկ վաղուց էին նկատել, որ տիեզերքի զանազան երևոյթների մէջ որոշ կարգ ու կանոն է տիրապետում, թէ շատ երևոյթներ կատարւում են որոշ օրէնքների հիման վրայ։ Երկնային մարմինները շարժւում են ոչ թէ որպէս պատահում է, այլ նրանց ընթացքը չափած-կտրած է։ Քարը, մետաղը, բոյսը, կենդանին, բոլորն էլ իրանց էութեամբ և գոյութեամբ ենթարկւած են որոշ անփոփոխ սկզբունքների, կախւած են որոշ պայմաններից։ Ուրեմն տիեզերական երևոյթների մէջ ամեն տեղ կանոններ, սկզբունքներ, պայմաններ են տիրապետում։ Ահա այդ կանոնների, սկզբունքների, պայմանների ուսումնասիրութիւնը զանազան գիտութիւններ է առաջ բերել։ Աստղաբաշխութիւնը, տարրալուծութիւնը, մեքենաբանութիւնը, բնագիտութիւնը և այլն և այլն, ուսումնասիրում են զանազան երևոյթները, այսինքն պարզում, բացատրում են նրանց էութիւնը (կանոնները, պայմանները...) Եւ այդ ուսումնասիրութիւնը միջոց է տալիս մարդկանց տիրապետել բնութեան վրայ, իրանց օգտին ծառայեցնել բնութեան անթիւ առարկաները, ոյժերը, երևոյթները... Առանց նախապէս շոգիի յատկութիւնն ուսումնասիրելու, մարդիկ չէին կարող երկաթուղի կառուցանել։ Առանց մարդկային մարմնի մանր ու բարակ ուսումնասիրութեան՝ բժշկականութիւնն արժէք չունի։

Բայց տիեզերքի մէջ մի մեծածաւալ երևոյթ կայ, որի մէջ կարծես թէ, ոչ մի կանոն չկայ, սկզբունք չկայ, որ ասես թէ կատարւում է բոլորովին պատահական կերպով։ Այդ երևոյթը մարդկային կեանքն է, որ մի խառնիճաղանճ շփոթութեան կերպարանք ունի։ Մարդկային կեանքը նմանում է մի խառնափնթոր ալեկոծութեան, որի մէջ ոչ մի կանոնաւորութիւն չկայ։ Մարդիկ վնասում են իրանց սատանաների ներշնչութեամբ, ազգերը իրար դէմ պատերազմ են մղում, մի ազգ անդունդ է գլորւում, միւսը լեռն է բարձրանում, Հասարակութիւնը, մարդկութիւնը ապրում է պատահական կերպով... Ուսումնասիրելու ոչինչ չկայ, որովհետև հաստատ պայմանների չէ ենթարկւում կեանքը... իսկ եթէ այդ պայմանները չկան, ինչպէս պիտի որոշ ընթացք տայ նրան մարդկային կամքը...

Սակայն, ոչ — ահա ձայն է բարձրացնում Օգիւստ Կոնտը – այդ խառնաշփոթութիւնն էլ որոշ կանոնների է ենթարկւած, մարդկային կեանքն էլ ուրիշ մի բան չէ, եթէ ոչ՝ մի տիեզերական կանոնաւոր երևոյթ... Կեանքը, հասարակութիւնը նոյնպէս ծլում, աճում կամ թառամում է, որպէս մի բոյս, որպէս մարդկային մարմինը։ Միայն թէ հասարակութեան, մարդկութեան կեանքը շատ աւելի բարդ երևոյթ է, ուստի նրա կանոնաւորութիւնը ըմբռնելու համար մարդիկ մինչև այժմ անպատրաստ էին։ Բայց վերջապէս ժամանակ է, որ մարդկային միտքը սկսէ այդ բարդագոյն երևոյթն էլ ուսումնասիրել, ժամանակ է, որ մարդկային հասարակական կեանքն էլ որոշ գիտութեան առարկայ դառնայ, որովհետև առանց այդ ուսումնասիրութեան չէ կարող կեանքը կանոնաւոր առաջադիմութիւն անել։ Եւ այդ ուսումնասիրութիւնը պէտք է կատարել զուտ գիտական-տրամաբանական եղանակներով, մի կողմ թողնելով անհիմն ենթադրութիւնները, ոգիների ազդեցութիւնը և գոյութիւն չունեցող վերացական պատճառները։ Երբ այդպիսի դրական եղանակներով կ'ուսումնասիրւի հասարակական կեանքը, այն ժամանակ մարդկութիւնը պարզ ու որոշ կ'ըմբռնէ, թէ ինչպէս պիտի կազմակերպէ իր կեանքը, որ նա մարդավայել լինի... Օգիւստ Կոնտը այնպիսի զօրեղ կերպով շեշտեց իր պահանջը, այնքան բազմաթիւ օրինակներով ապացուցեց իր միտքը, որ չընայելով նրա, ի միջի այլոց, քարոզած բազմաթիւ անհեթեթութիւններին և մոլորութիւններին, այնուամենայնիւ նա իր գլխաւոր նպատակին հասաւ։ Հասարակական կեանքի ուսումնասիրութիւնն ամենուրեք ընդունեցաւ, որպէս մի խիստ կարևոր և նշանաւոր գիտութիւն, որ այսօր աչքի ընկնող տեղ է բռնում համալսարանական առարկաների շարքում, իսկ փոքրը ի շատէ օգտակար հասարակաց գործիչը պիտի անպայման ծանօթ լինի գոնեա հասարակագիտութեան այբբենարանի հետ։

Ս. Թ.

ԼՈՒԿՐԷՑԻԱ ԲՈՐՋԻԱ*)

Ողբերգութիւն երեք արարածով

ՎԻԿՏՈՐ ՀԻՒԳՕՅԻ

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Նրանք, Լուկրեցիա.

Լուկրէցիա, (*արագ ներս է գալիս, անհերը հագին դահլիճի մօտ կանգնում*): Դուք ինձ մօտ...

Բոլորը: Բայց Ջէննարօյից, որը հոգնած է դահլիճի անկի մէջ: Լուկրէցիա Բորջիա:

Լուկրէցիա: Մի քանի օր առաջ դուք, բոլոր այստեղ կանգնածներդ յիշողներ էիք տալիս ինձ, իսկ այժմ անուշս սարսափով էք արտասանում: Այո, դուք կարող էք այժմ ինձ վրայ սարսափով նայել: Ես եմ, պարոններ: Ես եկայ այստեղ, որպէս զի ձեզ մի նորութիւն յայտնեմ, որ դուք բոլորդ էլ թունաւորուած էք և որ ձեզ մնում է ապրելու միմիայն մէկ ժամ... Մի՛ շարժուէք տեղից, հարեւան դահլիճում շատ թիկնապահներ ունեմ... Այժմ իմ կարգը է ձայն բարձրացնելու և ջախջախել ձեզ բոլորիդ ոտից մինչև գլուխ: Ջէպպօ Լիւերէտտօ, միացիր քո հօրեղբայր Վիտտէլիի հետ, որին ես ծակծկեցի Վատիկանի ներքնասներից մէկում: Ասկանիո Պէտրուչչի, գնա՛ քո եղբայր Պանդոլֆօի մօտ, որին ես սպանեցի նրա կայքը ձեռք ձգելու նպատակով: Օլոֆէրնօ Վիտէլլոցցօ, քեզ սպասում է Եաղօ Ապպիանոն, որին ես թունաւորեցի տօնախմբութեան ժամանակ: Մաֆֆիօ Օրսինի, գնա՛ քո եղբայր Դրաւինիի մօտ և պատմիր նրան, թէ ինչպէս ես նրան քնած ժամանակ սպանեցի: Ապոստոլօ Գաղելա, ես գլխատեցի քո հայր Ֆրանչիսկին, խեղդամահ արի քո եղբայր Ալֆոնսին: Դու էլ միացիր նրանց հետ... Պարոններ, դուք ինձ պատահելու համար իրընջոյք տուիք Վենետիկում, ես ձեզ փոխարէնը հատուցանում եմ Ֆէբրարայում: Տօնախմբութիւնը հեռանում է տօնախմբութեան, պարոններ:

Ջէպպօ: Այ վատ բան, Մաֆֆիօ:

Մաֆֆիօ: Ստուած յիշենք:

Լուկրէցիա: Օ՜, բարեկամներ, դուք այս չէիք սպասում... Ես կարծում եմ, որ իմ փոխարէն լիովին վրէժխնդիր եղայ: (Վարդապետներին) Իմ հայրեր, տարէք այս պարոններին հարեւան դահլիճը, խոստովանեցրէք սրանց և օգտուեցէք ժամանակից, որպէս զի հանէք դրանց միջից այն ամենը, ինչոր կարելի է: Ձեզանից նրանք, պարոններ, որոնք պահպանել են իրանց հոգին, թող խոստովանուին առանց երկիւղի, թէ իրանց հոգին լաւ մարդոց ձեռքին կըլինի: Այս վարդապետներն եկեղեցւոյ արժանաւոր սպասաւորներ են, նշանակուած են նորին սրբութիւն պապից ներկայ դէպքին աջակցելու համար... Բայց մտածելով ձեր հոգու մասին, ես չեմ մոռացել նաև հոգալու մարմինների մասին: Նայեցէք (Վարդապետներին, որոնք հանգնած են դահլիճի մօտ): Քիչ այս կողմ կանգնեցէք, իմ հայրեր, որպէս զի այս երիտասարդները կարողանան տեսնել (Վարդապետները յետ են *հաշուած մի կողմ, երեսամ են հինգ դագաղ սահմանուած ծածկուած*): Ընդամենը հինգ հատ է... Ա՜, պարոններ, դուք կտրատում էք դժբախտ կնոջ սիրտը և կարծում էք, թէ նա ձեզանից վրէժխնդիր չի լինել: Ահա այս քո դագաղն է, Ջէպպօ, այս քոնը, Մաֆֆիօ, Օլոֆէրնօ, Ապոստոլօ, Ասկանիո, սրանք էլ ձերն են:

Ջէննարօ (*որին նա չէր նկատել, մօտենում է*): Հարկաւոր է նաև վեցերորդ դագաղը:

Լուկրէցիա: Ստուած իմ, Ջէննարօ:

Ջէննարօ: Այո՛, ես եմ:

Լուկրէցիա: Թող բոլորը դուրս գան... Թողէք մեզ... Դուբէտտա, ինչ որ էլ պատահէր, ինչ որ էլ լսի այս դահլիճում, ոչ ոք չըպէտքէ այստեղ ներս մտնի: Կարգադրիր:

Դուբէտտա: Լսում եմ: (Վարդապետները դուրս են գնում, պատնէշով իրանց հետ երիտասարդներին, բոլորովին *սայսայած, հիանդացած և այս ու այն կողմ ընկնելով*):

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Ջէննարօ, Լուկրէցիա

(Սենեակը լուսաւորուած է աղօտ լուսով: Բոլոր դռները փակած են: Լուկրէցիա և Ջէննարօ, մնալով միայնակ, նայում են միմեանց վրայ մի քանի րոպէ, չիմանալով որտեղից սկսել:

Լուկրէցիա (*իր հետ*): Սա Ջէննարօն է:

(Վարդապետների երգեցողութիւնը դրսից):

Nisi Dominus aedificaverit domum, in vanum laborant qui aedificant eam.

Լուկրէցիա: Դարձեալ դուք էք, Ջէննարօ: Միշտ դուք էք պատահում, երբ ես տալիս եմ ահարկու հարուածներ. Ստուած իմ, ինչպէս էք դուք եկել այստեղ:

Ջէննարօ: Ես ամեն բանի սովոր եմ:

Լուկրէցիա: Դուք դարձեալ թունաւորուած էք: Դուք կըմեռնէք:

Ջէննարօ: Եթէ միայն կըկամենամ մեռնել: Ես դեղթափ անեմ:

Լուկրէցիա: Ա՜խ, փառք Ստուծոյ:

---

*) Տես Տարազ № 34.

Գրկոցի գրիչեմ

Ջէննարո։ Մէկ խօսք։ Դուք փորձւած էք այս տեսակ գործերում։ Բաւական՞ է արդեօք այս ամանի մէջ եղած հեղուկը, որպէս զի ազատեմ իմ բարեկամներին, որոնց ձեր վարդապետները տարան դագաղների մօտ։

Լուկրէցիա (նայելով ամանին)։ Ո՛չ, Ջէննարո, նա ձեզ հազիւ բաւական է։

Ջէննարո։ Չէ՞ք կարող արդեօք տալ դարձեալ մի ուրիշ աման։

Լուկրէցիա։ Ես ձեզ բոլորը տուի։

Ջէննարո։ Լաւ։

Լուկրէցիա։ Ինչ էք անում, Ջէննարո։ Շտապեցէք։ Մի հանաք անէք. այս բոպէիս խմեցէք, ի սէր Աստծոյ։ Ինչ անխելք էք։ Ազատեցէք ձեր կեանքը։ Դուք դուրս կըդաք այս գաղտնի դռներով, որ միայն ես գիտեմ։ Դեռ ամեն բան կարող է ուղղել։ Այժմ գիշեր է։ Շիանները իսկոյն կըթամբեն։ Վաղն առաւօտ դուք կըլինէք Ֆէրրարայից հեռու։ Խմեցէք և ճանապարհ ընկէք։ Դուք պէտք է ապրէք, ձեզ անհրաժեշտ է ազատել։

Ջէննարո (վերցնելով դանակը սեղանից)։ Դուք իսկոյն կըմեռնէք։

Լուկրէցիա։ Ի՞նչպէս, ի՞նչ ասացիք։

Ջէննարո։ Ես ասում եմ, որ դուք հիմա թունաւորեցիք հինգ երիտասարդների, իմ ամենալաւ բարեկամներին և նրանց մէջ Մաֆֆիո Օրսինին, որի փոխարէն ես ընդունում եմ ինձ վրայ վիրաւորանքը և վրէժխնդրութիւնը։ Ես ասում եմ, որ դուք մի պիղծ և անաղնիւ գործ էք կատարել, որ անհրաժեշտ է վրէժխնդիր լինել Մաֆֆիոի և միւսների փոխարէն և որ դուք այժմ կըմեռնէք։

Լուկրէցիա։ Ասուած իմ։

Ջէննարո։ Աղօթեցէք, միայն շուտով. ես թունաւորուած եմ և պէտք է շտապեմ։

Լուկրէցիա։ Ո՛չ, այդ անկարելի է, որ Ջէննարոն ինձ սպանէր։

Ջէննարո։ Ո՛չ միայն կարելի է, այլև կասկած չըկայ և երդւում եմ Աստուծով, եթէ ձեր տեղը լինէի ես, ծնկաչոք լուռ կ՚աղօթէի նրա առաջ։

Լուկրէցիա։ Ո՛չ։ Ես ձեզ կրկնում եմ. դա անկարելի է։ Բոլոր սարսափելի մտքերից, որոնք անհանգիստ են անում ինձ, ոչինչ այդպիսի բան չի անցել երբէք իմ գլխով... Ի՞նչպէս էք դուք դանակ բարձրացնում վրաս։ Սպասեցէք, Ջէննարո։ Ես պէտք է ձեզ երկու խօսք ասեմ։

Ջէննարո։ Շուտով։

Լուկրէցիա։ Վա՜յ ձգիր դանակը, դժբախտ։ Թող այդ։ Եթէ դու իմանայիր... Ջէննարո։ Դիտես արդեօք, թէ ով ես դու և ո՞վ ես։ Դու չըգիտես, թէ որքան մօտ ազգական ես... Արդեօք ասել սրան բոլորը թէ ոչ... Մի արիւն է հոսում մեր երակներում, Ջէննարո։ Քո հայրն էր Յովհան Բորջիան, Գանդիայի դուքսը։

Ջէննարո։ Ձեր եղբայրը... Ա՜, ուրեմն դուք իմ հօրաքոյրն էք, ուրեմն ես ձեր եղբօր որդին եմ։ Ա՜, ուրեմն նա էր իմ մայրը, Գանդիայի դժբախտ դըքսուհին, որին Բորջիայի ցեղը դժբախտացրեց... Որքան յաճախ մայրս չիշում էր ձեր մասին իր նամակներում։ Դուք այն անտարբեր բարեկամներիցն էք, որոնց մասին նա սարսափով գրում էր ինձ, որոնք սպանեցին հօրս և լցրին մօրս կեանքը արտասուքով և արիւնով։ Այժմ ես պէտք է ոչ միայն վրէժխնդիր լինեմ իմ հօր փոխարէն, այլև ազատեմ մօրս։ Ուրեմն դուք իմ հօրաքոյրն էք։ Ես Բորջիա եմ։ Ո՛հ, ես կըլիելագարւեմ... Լսեցէք, Լուկրէցիա Բորջիա, դուք բաւական ապրել էք աշխարհիս երեսին և այնքան չարագործութիւններ էք արել, որ պէտք է արհամարհւէք և նախանձելի դառնաք ձեզ համար։ Ի հարկէ, դուք յոգնել էք ապրելուց։ Ուրեմն և պէտք է վերջացնել ձեզ հետ։ Մեզ նման ընտանիքներում, որտեղ յանցանքները իբրև ժառանգութիւն է անցնում, միշտ պատահում է, որ օրհասական ճակատագիրը վերջանում է սպանութիւնով, վերջին յանցանքով, որն ազատում է միւսներին... Աղնիւ մարդուն երբէք չեն մեղադրիլ նրա համար, որ նա կտրէ ազգագրական ճիւղի վատ տերևը։ Սպանացի Միտրերը սպանեց իր հօրեղբայր Բոդրիգօ Լարին աւելի չնչին գործի համար... և այդ սպանացին հէնց դրա համար փառաբանւած էր, լսում էք, սիրելի մօրաքոյր։ Ո՜հ, բաւական է խօսել։ Յանձնեցէք ձեր հոգին Աստծուն, եթէ միայն դուք հաւատում էք նրան և ձեր հոգուն։

Լուկրէցիա։ Խնայիր ինձ, Ջէննարո, և մի գործիլ այդ յանցանքը։

Ջէննարո։ Յանցանք։ Մի՞թէ դա յանցանք կըհամարւի։ Ի՞նչ անենք, ես չարագործութիւն կանեմ, որովհետև ես Բորջիա եմ։ Ծնկաչոք եղէք մօրաքոյր, ծնկաչոք։

Լուկրէցիա։ Մի՞թէ սրա՞ն էի արժանի իմ սիրոյ համար, Ջէննարո։

Ջէննարո։ Սէ՞ր...

Լուկրէցիա։ Դա անկարելի է։ Ես ուզում եմ ազատել քեզ քեզանից։ Ես օգնութիւն կըկանչեմ։ Ես կաղաղակեմ։

Ջէննարո։ Դուք չէք բաց անիլ այս դուռը։ Դուք մի քայլ անգամ առաջ չէք դնիլ և ձեր

աղաղակները ձեզ չեն կարող ազատել։ Եվ որ դուք ինքներդ արգելեցիք ներս գալու, ինչ որ էլ պատահէր։

Լուկրէցիա։ Բայց դա ստորութիւն է ձեր կողմից, Ջէննարո։ Սպանել մի անօգնական կնոջ. ո՜հ, ոչ, ձեր հոգու մէջ աւելի ազնուութիւն կայ։ Լսիր, եթէ դու ինձ ուզում ես ոչնչացնել, սպանիր յետոյ։ Ես չեմ խնայում կեանքս, բայց ինձ անհրաժեշտ է թեթևացնել սիրտս, որ տանջւում է քո վարմունքից։ Դու երիտասարդ ես, որդի, իսկ երիտասարդութիւնը միշտ անխիղճ է։ Ո՜հ, եթէ ես պէտք է բաժանւեմ կեանքից, ես չեմ ուզում մեռնել միմիայն քո ձեռքով։ Հասկացիր, որ այդ անկարելի է։ Դու չես կարող հասկանալ, թէ որ աստիճան դա սարսափելի կըլինէր։ Բացի դրանից, Ջէննարո, իմ ժամը դեռ չէ խփել։ Ճշմարիտ է, որ ես շատ յանցանքներ եմ գործել, ես սարսափելի մեղաւոր եմ, հէնց նրա համար, որ մեծ ոճրագործ եմ և անհրաժեշտ է տալ ինձ ժամանակ մեղքերս քաւելու. լսում ես, Ջէննարո, դա ինձ անպատճառ հարկաւոր է։

Ջէննարո։ Դուք իմ մօրաքոյրն էք։ Ի՞նչ էք արել իմ մօրը, Լուկրէցիա Բորջիա։

Լուկրէցիա։ Սպասիր, ես չեմ կարող բոլորն ասել։ Իսկ եթէ ես քեզ բոլորը պատմէի, շատ կարելի է, որ կրկնապատկէի քո սարսափը և դէպի ինձ ունեցած արհամարանքը։ Լսիր ինձ մէկ րոպէ։ Ո՜հ, եթէ դու թոյլ տայիր ինձ քո ոտքերի առաջ խոստովանելու իմ մեղքերը, դու ինձ կըներէիր։ Ուզում ես՝ ես կուսանոց կըմտնեմ, ես ինձ կըփակեմ մենաստանում։ Եթէ քեզ ասէին յետոյ. ահա մի դժբախտ կին, որ քնած է չոր գետնի վրայ, իր սեփական ձեռքերով փորում է իր գերեզմանը, գեշեր ցերեկ աղօթում է Աստծուն ոչ թէ իր համար —ում է հարկաւոր նրա աղօթքը—այլ քեզ համար, որ իրան կուեցնում է միայն նրա համար, որպէս զի երբ և իցէ կարողանար համարձակ նայել նրա վրայ, որպէս զի երբ և իցէ արտասուք թափէր, տեսնելով նրա սրտի և հոգու վէրքերը և չըկրկնէր այն՝ ինչ որ այժմ դու երեսովս ես տալիս։ «Դուք Լուկրէցիա Բորջիան էք... Եթէ այս բոլորը յայտնէին քեզ, Ջէննարո, կարող էիր յետ մղել նրան... Ո՜հ, խնայիր, մի սպանիր ինձ, իմ Ջէննարո, ապրենք միասին։ Դու ինձ կըներես, ես կըխոստովանեմ։ Խնայիր ինձ... Ինչ հարկաւոր է անխիղճ վարուել մի դժբախտ կնոջ հետ, որ քեզանից ներողութիւն է խնդրում... Եւ գիտես, Ջէննարո, շատ լըրութիւն և մեծ յանցանք կըլինէր, եթէ դու ինձ սպանէիր։ Պարդը կին սպանէ։ Ոչ, դու այդ չես անիլ։

Ջէննարո (դողդողալով)։ Ես պէտք է...

Լուկրէցիա։ Ո՜հ, ես տեսնում եմ, որ ազատուած եմ։ Ես կարդացի այդ քո աչքերում։ Թոյլ տուր ինձ լաց լինել ոտներիդ մօտ։

Ձայն, դրսից։ Ջէննարո։

Ջէննարո։ Ո՞վ է կանչում ինձ։

Ձայն։ Եղբայր, Ջէննարո։

Ջէննարո։ Պաֆֆիոն է։

Ձայն։ Ջէննարո, ես մեռնում եմ։ Վրէժխնդիր եղիր իմ փոխարէն։

Ջէննարո (վերջինելով դռնակը)։ Լաւ, ես այլ ևս չեմ լսում։ Լսում էք, պէտք է դուք մեռնէք։

Լուկրէցիա (պաշպաշելով և յետոյ բռնելով)։ Խնայիր, խնայիր։ Մէկ խօսք դարձեալ։

Ջէննարո։ Ո՛չ։

Լուկրէցիա։ Լսիր ինձ։

Ջէննարո։ Ո՛չ։

Լուկրէցիա։ Յանուն Աստուծոյ։

Ջէննարո։ Ո՛չ (խողխողում է նրան)։

Լուկրէցիա։ Օ... դու ինձ ոպանեցիր... Ջէննարո, ես քո մայրն եմ...

Կ. Մարտիրոսեանց

ՎԵՐՋ

ՀՈՎԻՈՒՀՈՒ ԵՐԳԸ

(Հատուած «Ուրացող» պոեմայից)

«Քնաղ լուսին, պարզ աստեղունք,
Վառ ցոլացէք երկնքից,
Վիշտ ու թախիծ տարէք հեռու՝
Սիրող սրտի խորքերից։
Դուք լոյս տուէք, դուք յոյս տարէք
Հայոց կոյսի հէգ սրտին,
Որ անհամբեր ձեզ կըսպասէ՝
Անչքը գցած երկրնքին։
Կոյսն իր անբիծ, մատաղ սրտով
Ձեզնից մի խօսք է ուզում—
Թէ որտեղ է սիրելին
Ա՜խ, ինչի՞ է ուշանում...
Աստղ ու լուսին անցան մեղմիկ
Հայոց քնաղ երկնքից,
Զոյգ սիրողներ գրգռած իրար
Ներքանք տեսան վերևից»...

—

«Սա մի հասարակ երգ էր սիրային
Հայոց աշխարհի անհոգ երգերից,

Խորտակված գալերի մատնությունը

Որ դրոշմելով իմ հոգու վրայ՝
Էլ չըհեռացաւ իմ այրուած սրտից։
Ա՜խ, ես զգացի անսովոր մի բան...
Մի դիւրագրգիռ, նախանձոտ թախիծ
Մի չքնաղ պատկեր, աննման հայեացք
Կարծես անցնում էր լրիվ իմ առջից։
Ես ուզում էի նրան տիրանալ
Պատանու սրտի մաքուր բաղձանքով,
Ես ուզում էի սիրել, սիրուել՝
Անմեղ տարիքի՝ սուրբ ձրգտումներով։
Ձայնը լըռել էր... ուզեցի մոռնալ —
Այդ լիշատա՛կը հեռացնել ինձնից.
Բայց մի այլ ձայնջ կարծես ասում էր —
«Փոխ՛ը դու նրան, հեռու չէ՛ քեզնից»։
Բայց այն ժամանակ ես չըկամեցայ
Կարմիր արիւնով ձեռքերս ներկել,
Ես չըկամեցայ սիրուն հովուհու
Խաղաղ հանգիստը լեղի դարձնել...
Դու ատելի՛ ես, ինքս ինձ ասացի,
Գընա, հեռացիր այդ անբիծ կեանքից...
Գընա ծախելու ազգ ու հայրենիք,
Գրա՛ շըղթաներ զընիր օտարից...

Պետ. Մոսուեանց

Ի՞ՆՉՈՒՄՆ Է ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆԸ

(Ե. Կարդոզոյից)

Օրերը անցնում էին իրար ետևից. շա՛տ, երկար օրեր. բայց ես չէի կարողանում հասնել ինձանից խոյս տուող սքանչելի անծանօթուհուն, որ վախուստ էր տալի իբր հմայիչ և անըմբռնելի ստուեր... Եւ ահա, երբ ես նրան համարեա հաւատարուեցայ, տեսայ որ նրա դէմքը հրաշալի է և որ նա նայում է ինձ հմայիչ ժպտով։

Ես ձեռքերս երկարեցի դէպի նա և ձգտելով դէպ ինձ՝ ձշնջացի.

—Ո՞վ ես դու. ասա՛.

Եւ ստուերը պատասխանեց.

—Մարդկային բարբառում իմ անունս է «Հրեանգ», բայց քեզ համար ինձ կոչում են այլ կերպ։

Եւ ես ասացի նրան.

—Գեղանի՛ս, ասա, ինչպէս է քո անունը — մի՛միայն ինձ համար։

Բայց նա պատասխանեց.

—Քեզ համար — իմ անունն է «Մեղմ»...

Ես խորը կերպով նայեցի նրան, նրա զգլող քնքոյշ աչքերին... բայց... բայց և այնպէս հեռացայ նրանից։

* * *

Ձուտով ճանապարհին ինձ պատահեց նոր ըստուեր՝ հրապուրիչ և զարմանալի տեսքով։ Ես արդէն վաղուց էի նրան հետամուտ լինում և, երբ վերջապէս հասայ՝ տեսայ որ նրա դէմքը հիանալի է։

Եւ ես հարցրի.

—Բայց ո՞վ ես դու. ասա՛։

Եւ ստուերը պատասխանեց.

—Մարդկային բարբառով ես կոչուում եմ «Սէր», բայց քեզ համար ինձ կոչում են այլ կերպ։ Հազարից մէկը միայն կարող է հպարտանալ, որ իր ճանապարհին ինձ պատահել է. բայց երբ մէկ անգամ պատահեց — չըպէտք է բաց թողնէ. նա իմ ընտրեալն է — թող չըմոռանայ, որ երկրորդ անգամ նա ինձ ճանապարհին չի պատահիլ։

Ես շատ օրեր անբաժան անցրի «Սիրոյ» հետ, մինչև որ ստուերին չըտուի ինձ տանջող հարցը.

—Գեղանի՛ս, ասա ինչպէս է քո անունը... իմ համար միմիայն.

«Սէրը» հրաշալի աչքերով ինձ նայեց և ասաց.

—Քեզ համար — իմ անունն է «Մեղմ»։

Ձատ երկար չէի կարողանում նրանից հայեացքս հեռացնել, բայց... բայց և այնպէս թողի և հեռացայ նրանից...

* * *

Եւ ահա, պատահեց մէկ անգամ, մէկ դաժան տեղում, մէկ ցանր, տխուր ստուեր, որ խոյս տալով՝ շփուեց ինձ հետ։

Ես վազեցի նրա ետևից. բայց նա չէր աշխատում հեռանալ, այլ վերադարձաւ ինձ մօտ՝ լսելով իմ աղաչանքը։ Ինձ թուաց, որ նրա ճակատին խաղաղութեան և հանգստութեան կնիք կայ, և որ ուռն ու խիստ խաւարում, որ փաթաթել էր աշխարհը և երկնակամարը, նրա դէմքը իսկապէս հրաշալի է։

—Բայց ո՞վ ես դու. ասա՛. - հարցրի ես նրան։

Եւ նա պատասխանեց ինձ.

—Մարդկային բարբառում իմ անունս է «Մահ», բայց քեզ համար ինչպէս և բոլոր ինձ կանչողների համար — իմ անունս այլ է.

Եւ ես ասացի.

—Բայց քեզ հետ ես կըզտնեմ «Հանգստութիւն»։ Չէ՞ վիճակուած ինձ կեանքում ոչ «Հրեանգ» և ոչ «Սէր», ինձ մնում է միայն «Մահ»։

Բայց նա պատասխանեց.

—Քեզ համար և բոլոր ինձ կանչողների համար իմ անունս է—«Մեղ»...

Եւ ես նորից հեռացայ և տխուր, թախծալի շարունակեցի ճանապարհս։

* * *

Օրերը անցնում էին օրերի ետևից... Եւ շատ երկար օրերից յետոյ ինձ թւաց, որ ով որ գնում է ինձ հետ կարդով և... կանդնացրեց ինձ։

Ես յետ նայեցի և տեսայ մէկի խիստ, անպատճոյճ դէմքը, բայց այնպէս էր ամրապինդ, որ նրա ոյժը տալիս էր նրան դեղեցկութիւն։

Եւ նա ասաց.

— Ոմանց համար իմ անունս է «Աշխատանք»։ Ոմանք ևս կոչում են այլ կերպ։ Բայց ինձ համար բոլորը միակերպ հաւասար են։

Ես շատ օրեր անցրի «Աշխատանքի» հետ միայնակ. բայց ես արդէն այլ ևս չեմ հարցնում ինչպէս է նրա անունը ինձ համար։

Ես ինքս զգացի, ես ինքս հասկացայ որ ինձ համար նրա անունն է —«Հանգստութիւն»։

Ա.ՀՈՍ Ե.

Երգիծաբանական

ՍԱՏԱՆԱՅ ԲՈՆՈՂՆԵՐ

I

—Փեսայ, փեսայ! չես իմանում, քա? Փեսայ!...

—Ով է?—ձայն տուեց քնաթաթախ Թաթոսովը իր ննջարանից։

—Ես իմ, ես... հէնց դուն ապրիս, մէ գուռը բաց արա՝ խիստ հարկաւոր բան ունիմ քիզ մօտ!...—շունչը կտրուած պատասխանեց դռան ետևից Թաթոսովի զոքանչը, պառաւ Սալոմէն։

Թաթոսովը իսկոյն վեր կացաւ իր անկողնուց, խալաթը հագաւ, լամպարը վառեց և դուռը բաց արաւ։ Նրա առաջ յայտնուեց Սալոմէն գիշերային շապիկով, ոտաբոբիկ, խինաբանդով գլուխը կապած։ Երկիւղից Սալոմէի դէմքը գունատուել էր, իսկ շրթունքները դողդողում էին։

—Վահ, ինչ խաբար է, վուր էս կէսգիշերին ինձ զարթնեցնում ես?—ասաց Թաթոսովը զարմացած,—հէր օխնած, սաղ քաղաքը քնած է, մադրամ դուն էստի մանես դալի։

Սալոմէն փոխանակ պատասխանի, տատանուեց և գլորուեց բազկաթոռի վրայ։

—Ջուր!...

Ցնցյալուած Թաթոսովը սեղանից իսկոյն վերցրեց ջրի շիշը, բաժակը լցրեց և մօտեցրեց իր զոքանչի բերանին։ Երբ Սալոմէն մի փոքր ուշքի եկաւ, Թաթոսովը ուզում էր գնալ իր կնոջ ննջարանը և զարթեցնել նրան, բայց զոքանչը արգելեց իր փեսին, որ նա անհանգիստ չանի իր կնոջը՝ Նինոին, և փոքրիկ երեխաներին։

—Գնամ, կանչեմ Նինոին, դէդի ջան, վուր քիզ օտկենք, դուն հիւանդ իս։

—Չէ, չէ, փեսայ ջան, ես հիւանդ չիմ... Նրան մի զարթեցրու, թէ չէ ջահիլ է, կու վախենայ...

Թաթոսովը մնացել էր շւարած. նա չգիտէր՝ թէ Նինոն ինչից պիտի վախենար։

—Ախար մէ ասա, տեսնիմ՝ ինչ խաբար է?

—Լեզուս... չի պտտում,—պատասխանեց Սալոմէն սարսափած,—գնանք, վուրթի, գնանք ինձ հետ...

—Ուր գնանք? ինչ անենք? ինչ խաբար է? Մէ ասա է!

Սալոմէն դարձեալ տատանուեց և թուլացած ընկաւ բազկաթոռի վրայ։ Յետոյ մի փոքր ուշքի գալով, սկսեց լալ ու խաչակնքել։

—Հալբաթ խիլքը կորցրիլ է պառաւը,—մտածեց Թաթոսովը։

—Ես էն օթախումը էլ չիմ կանայ քնի,—ասաց Սալոմէն,—ես կու մեռնիմ և էնդի չեմ քնի... այ, այ լսում ես շան ոռնոցը?... Տէր Աստուած, օքմին պիտի մեռնի էս տնից!...

—Դեդի ջան, գնա, քնի, վունչինչ չըկայ,—խրախուսում էր Թաթոսովը իր զոքանչին,—շան ագաթն է՝ կ'օռնայ էլ, կու հաչի էլ։ Էդ թաւուր անմեղ բաներով սիրտդ մի շուռ բեր, գնա, գնա քնի!

—Բաս էն անիծուած սատանէքը ինչի ինչ էկի մեր բաղչումը?—ասաց Սալոմէն և դարձեալ սկսեց խաչակնքել։

—Ինչ սատանէք, ինչ քաջքեր, ինչ փտան? Հալբաթ էրազ ես տեսի!

—Ինչ էրազ! ես էս Նիմուտին իմ աչքով տեսայ նրանց մեր բախչի պատի տակին .. մէկը սիպտակ չարսաւ ունէր ծածկած, մէկն էլ սիւ շուրերով, լոնդի պուզերով ու էրկէն պոչով պպզիլ էր պատի տակին ու ինչ որ փսփսում... Կինաղամ լեղիս պատուիլ էր!

—Վահ, գրուստ ես ասում?

—Գնանք իմ օթախը ու ինքդ տես!—ասաց Սալոմէն և դողդողալով բռնեց իր փեսի ձեռքը։

Թաթոսովը, հպատակելով իր զոքանչին, ապշած ու բերանը բաց հետևեց նրան և մտաւ նրա ննջարանը։

II

Սալոմէն իսկապէս իր փեսի տանը չէր ապրում։ Նա Թիֆլիսի Զուզուրէթ թաղում իր սեփական բնակարանն ունէր, ուր ապրում էր իր տղայի և հարսի հետ միասին։ Սակայն հաշտ չէր ապրում Սալոմէն իր հարսի հետ։ Հէնց սև կատուներ էին, որ անընդհատ անցնում էին հարսի և սկեսուրի միջով։ Սալոմէն, սև կատուներից հուշտ լինելով, յաճախ թողնում էր իր տունը և շաբաթներով տեղափոխւում իր փեսի մօտ ապրելու այնքան, մինչև որ անցնում էր նրա գլխից սև կատուների մտապատկերը։ Իսկ էր Թաթոսովն էլ լաւ պատւում ու հիւրասիրում էր իր զոքանչին։ Դրա փոխարէն Սալոմէն իր փեսայի ներկայութեամբ գովում, գովաբանում էր Նինոին. նա գովում էր իր աղջկայ շնորհքը, ձեռնաջուրը, գեղեցկութիւնը, նրա

համեստութիւնը, ամուսնական հաւատարմութիւնը և այլն։ Սալոմէն հաւատացնում էր Թաթոսովին, որ ամբողջ Թիֆլիսում չի ճարուիլ Նինոի պէս աղջիկ, որ հողը-ջուրը չի ծնել նրա պէս նամուսաւոր տանտիկին։ Բայց, չընայելով այդ գովասանքներին, Իսայ Իսայիչը այնքան էլ չէր երկրպագում իր կնոջ։ Իսայ Իսայիչը նրանցից էր, որ, ինչպէս ասում են, ձեռքն ընկածին բաց չէր թողնում։ Նա թէպէտ մահմեդական չէր, բայց մեծ սիրահար էր բազմակնութեան։ Գիշերները նա շատ անգամ ուշ էր վերադառնում տուն և, իր կնոջը քաղցր քունը չըխանգարելու համար (գոնէ ինքն այդպէս էր հաւատացնում), ինքն իր համար առանձին ննջարան էր յատկացրել։ Իսայ Իսայիչի ննջարանը բաժանուած էր Նինոի ննջարանից մի ընդարձակ նախասենեակով։ Այդ նախասենեակից մի ուրիշ դուռ էր բացւում դէպի հիւրասենեակը, որին կից էր Սալոմէի ժամանակաւոր ննջարանը։ Սալոմէի ննջարանի լուսամուտները դէպի այն պարտէզն էին նայում, ուր նա գիշերւայ կիսին հեռուից նկատել էր քաջքերին։

III

—Այ, այ, էն ծառի տակը մտան!—լեղապատառ շշնջաց Սալոմէն իր փեսին և սկսեց ինքն իրան փընթփնթալ «Հրաժարիմք ի սատանայէ» աղօթքը։ Թաթոսովը վախեցած և հետաքրքրութեամբ դուրս նայեց լուսամուտից։ Լուսնեակ գիշեր էր։ Նա նայեց դէպի Սալոմէի ցոյց տուած ծառը և ստուերի տակ նշմարեց մի ինչ-որ սպիտակ սաւանով շարժուող կմախք, իսկ նրա կողքին մի սեազգեստ սատանայ։ Իսայ Իսայիչի մարմինը երկիւղից սկսեց դողդողալ։ Սալոմէն պառկել էր և երկու ձեռքով երեսը ծածկել։ Թաթոսովը թէպէտ իր զոքանչից պակաս չէր վախենում, բայց, իբրև տղամարդ, մօտեցաւ Սալոմէին և սկսեց նրա ականջին խրախուսական խօսքեր փսփսալ.

—Ախար, դեդի ջան, ինչի ես վախենում? քաջքն ինչ բան է, վուր էտենց վախենում իս? Սատանան ինչ է, վուր նրա խաթրու սիրտդ շուռ իս բերում? Նրանց գլխի տրաբլիը գիտենայ, մէբաշ Էստի չի գան և ինձ վախեցնին!... Դուն վուր Էստի մենակ մնայիր, իս էս նիմուտին կըգնայի, էրկուսին էլ շան պէս թրև կուտայի և Քուռումը կու խիղտէի... Ատուձ գիդենայ, ջոխին կու առնիմ և երկուսին էլ էնենց քօթակ կուտամ, վուր մինչի Սողանլուղ մէկ կու փախչին! ինձ ճանչնում իս? ինձ պերի գիլդի կուպէծ Թաթոսով կ'օսին!... Իս զաբուլ չիմ անի, վուր սատանէքը մեր բախչումը գլուխ գան, իմ երեխերքին ու իմ օղլուշադին վախացնին... Դեդի ջան, մի վախենար, սիրտդ դայիմ պահի... Վահ, վահ, վահ! մէ դէնը մտիկ արա է! էն հառամզադէքը մէկզմէկու պէս ինանում...

Սալոմէն գլուխը բարձրացրեց և զարհուրած դէպի դուրս նայեց։ Այդ բոպէին քաջքերը տներևութացան։ Թաթոսովն և նրա զոքանչը երկար նայեցին, բայց քաջքերը չքացել էին։

—Տէր Աստուած, քի փառք!—ասաց Սալոմէն, երկիւղածութեամբ խաչակնքելով երեսը,—էս ինչ օրի հասանք? Վայ մեր մեղքին, վայ մեր մեղքին! Ախ, դիւի շունն է մեղաւոր. թէ նա չ'օռնար, նրանք չէին գայ մեր բախչումը։

—Իս էն շանը էգուցկեթ դաբանչով կուսատկեցնիմ—ասաց մի փոքր սիրտ ասած Թաթոսովը։

Այդ գիշեր Սալոմէն և Թաթոսովը չըկարողացան քնել։ Նրանք երկուսով նստած պատուհանի առաջ՝ զանազան տեսակ դատողութիւններ էին տալիս իրանց տեսածի մասին և շուտ շուտ դէպի պարտէզը նայում։

—Իս նրա օխտեմէն կուգամ!—ասում էր Թաթոսովը,—աբա թող մէ էգուց գիշեր էլ մեր բախչումը տուն գան, տես՝ թէ վունց իմ կինձին տալով, էրկուսն էլ դուս գցում... ինձ պերի գիլդի կուպէծ Թաթոսով կ'օսին... Իս նրանց օխտէմէն կուգամ!...

—Նրանց օխտէմէն Աստուած դայ, վուրթի,—ասում էր Սալոմէն—թէ չէ ադամորդին նրանց մօտ չի կանայ ջուղաբ տայ։

Սալոմէն և Թաթոսովը պայման կապեցին, որ այդ գիշերւայ տեսիլքի մասին ոչինչ չ'ասեն Նինոին, որ միգուցէ յանկարծ նա վախենայ։

IV

Առաւօտեան, թէյի ժամանակ, Նինոն նկատեց իր մօր դէմքին մի տեսակ յոգնածութիւն և տխրութիւն։

—Դիշիրս չիմ կանացի աչքս կպցնիմ, Նինո ջան,—ասաց Սալոմէն,—շուգը մէ կռնեմէն, բաղլինջները մէկ էլ կռնեմէն...

—Մագրամ իս խիստ արմաղան քնեցի էս գիշիր,—ընդմիջից Իսայ Իսայիչը,—կինքումս էնէնց հանգիստ ու արխային քնած չըկայի։ Դուն վունց, Նինո ջան?

—Իս էլ լաւ էի քնած, մագրում շատ փիս երազների մէջն էի,—պատասխանեց Նինոն,—միթօմ՝ թէ էրազումս մէ ինչ որ ջեհել տղայ էկիլ է ու ինձ ուզում է կմշտի. իս էլ զօնտիկովս թրխկացրի գլխումը...

—Հախն է, հախն է!—բացականչեց Սալոմէն։

—Իժում?

—Իժում,—շարունակեց Նինոն,—միթոմ Իսային վրայ հասաւ ու դաբանչով սպանեց էն տղին...

—Բաս աչքն էլ չէի հանի!—պատասխանեց Իսայ Իսայիչը պարծենկոտութեամբ,—նա ինչ շուն է, վուր իմ օղլուշաղին բեդամաղ անի!

Այդ երազը Նինոն իրանից յօրինեց, որ փորձի իր մարդու խանդոտութիւնը։

—Մենակ տղին կի չէ,—շարունակեց Թաթոսովը,—քիզ էլ կու սպանէի նրա հետ։

—Իս էն թաւուր աղջիկ չիմ մինձացրի, վուր սալախանէքի բաժին դառնայ,—ընդմիջեց Սալոմէն,—էսքան ժուկ է ջեր օչով իմ աղջկան գէթ չի արի...

—Դուն էլի գովեցիր քու աղջկան?—ասաց ժպտալով Իսայ Իսայիչը։

—Հալբաթ գովասանքի արժանի է, վուր գովում եմ,—պատասխանեց Սալոմէն։

—Թուրքը իրա մածնին թթու չի ասիլ,—նկատեց Իսայ Իսայիչը ժպտալով։

—Դիախ, դիախ!—պատասխանեց Սալոմէն, մէբաշ իմ Նինոն էլ թթու մածուն չըդառնայ... Ատծուն փառք պիտի տաս, վուր Նինոիս պէս հալալ կաթնակեր է քի ռաստ էկի։ Դու սրա զադրը ջեր չիս գիտի, վուրթի, ջեր

ջեհիլ իս... Այ, Մախոխովի կնկանը տիս՝ ինչ օյին է բերում իր մարդու գլխին։

—Էդ վուր Մախոխովի կնիկը?—մէջ մտաւ Նինոն։

—Այ, էն վուր իր մարդուն քնացնում է ու գիշերը իր բճի հետ խունջիկ-մունջիկ անում...

—Վա, էգեբա քու աղջիկն էլ նրա վրէն ուփրո վատթար է!—նկատեց Իսայ Իսայիչը ժպտալով։

—Հա, վունց չէ! քիմէն թաքուն տասը ջուխտ սիրեկան իմ պահում,—պատասխանեց Նինոն նեղացած։

—Վայ, Աստուած վուչ անի! Աստուած վուչ անի, վուրթի!—ասաց Սալոմէն։

Թէյից յետոյ Սալոմէն համբուրեց իր երկու փոքրիկ թոռներին, մնաք բարով ասաց իր աղջկան ու փեսին և գնաց իրանց տուն։

—Իս էլ բազարումը բան ունիմ,—ասաց Թաթոսովը և տանից դուրս գնաց։

V

Իսայ Իսայիչը, փողոցում պատահելով իր երկու բարեկամներին՝ Դամբուլովին և Թաթուլովին, պատմեց նրանց նախորդ գիշերւայ դէպքը։ Նրանք սկսեցին ծաղրել Թաթոսովին և ծիծաղել նրա վրայ։

—Բաջքեր կի չէ,—վուտնիր!—ասում էին նրանք,—ով գիտի սարսաղացել իս ու աչքումդ բանիր ին էրևացի... ան էգեբա միզ իս սարսաղ ճանչնում, վուր էդ յանգի սարսաղ բանիր իս ասում... էէէ! խիլքի արի, տա!

Այստեղ Թաթոսովը մանրամասն պատմեց, նկարագրեց իր տեսածը, երդւեց իր արևով և վերջ ի վերջոյ հաւատացրեց իր բարեկամներին։ Դամբուլովը ու Թաթուլովը մնացել էին ապշած։

—Ով գիտի, աշխարհք է, կու պատահի,—ասաց Դամբուլովը,—օղորմած հոգի իմ մամէն իրա աչքով տեհիլ էր բռնած սատանին...

—Փիէ! իժում?

—Էդ սատանէն թուրմէ ամեն գիշեր գալիս է, նստում մեր ձիու վրէն, քշում, քշում, քրտնեցնում ու էլի բերում, կապում է գոմումը...

—Փիէ! իժում?

—Իժում իմ մամէս էլ մէ ջեր ձիու մէջքին կուպր է քսում ու վունց որ չի նստում, էնէնց էլ կպչում է ձիու մէջքից ու կուպրեմէն էլ չի կարում պոկ դայ...

—Փիէ! իժում?

—Իժում իմ մամէս կետին առնում է ու էդ սատանին էնքան քօթակ է տալի, վուր խիղճը իր էկած ճամփէն մոռանում է...

—Վահ!

—Իմ արիը!

—Իմ պարդեղէն էլ, սկսեց Թաթուլովը,—իր աչքով սատանի հարսնիք է տեհի... մեր Բախշօի զոքանչն էլ իր մալդու մեռնելու գիշերը տեհիլ է մի ինչ որ սիպտակ չարսաւով հրիշտակ, վուր Թուրմէ էկիլ էր ննջեցեալի հոգին տանելու։

—Վահ!

—Իմ արիը!

—Մաշ վունց անինք, վուր մեր բախչի սատանէքի օխտեմէն գանք?—հարցրեց Թաթոսովը։

Երեք բարեկամները, երկար ու բարակ խորհրդակցութիւններից յետոյ, վճռեցին, որ այդ գիշեր երեքով միասին հետամուտ լինեն, կուպր քսած պարանով որսան քաջքերին ու մի լաւ ջարդեն։

—Իժում վայ թէ էն անիծածները մէ բաշ վրայ ննդնին ու հոգիներս հանին?

—Թէ վուր մէ-մէ հաստ ասեղ ցցինք արխալուխներիս մէջ, էն վուխտը չին կանայ միզ մօտենայ։

—Հա, դուրթ է, էն մունդրիկները պողատից խիստ ին վախենում։

—Մաշ իս թոկին կուպր կու քսիմ ու հադիր կու անիմ,—ասաց Իսայի Իսայիչը,—էս գիշեր սահաթի էրկուսին, իփոր ամենքը քնած կուլին, իս ձիզ մուլափ կու տամ. պադեզդի դուռն էլ բաց կու թողնիմ ու դաբանչէն էլ մօտս հադիր կու պահիմ։ Դուք էլ մէ-մէ հատ եարաղ վի կալէք՝ ան բեբուդ, ան խանջալ...

—Լաւ կ'ուլի, լաւ կ'ուլի! սահաթի էրկուսին!

Դամբուլովը և Թաթուլովը մնաք բարով ասացին Իսայ Իսայիչին և հեռացան։

VI

Էս գիշեր էր։ Լուսինը հանդարտ լողալով ամպերի միջին, արծաթ շողքերը թափել էր ողջ Թիֆլիսի վրայ։ Խորին լռութիւն էր տիրում ամեն տեղ։ Թաթոսովի շունը, գլուխը վեր էր բարձրացրել դէպի երկինք, նայում էր լուսնին և անդադար օռնում։ Իսայ Իսայիչը իր երկու բարեկամների հետ միասին տան պատուհանից դիտում էր պարտէզը։ Ահա պարտիզի խորքում երևաց նախորդ գիշերւայ սպիտակ չարսաւով կմախքը, իսկ նրա կողքին սևազգեստ սատանան։ Դամբուլովի, Թաթուլովի և Թաթոսովի մարմնով մի սարսուռ անցաւ։ Երեք բարեկամները մէկզմէկու քաջալերելով, խաչակնքեցին և, մի մէ ասեղ ցցելով իրանց զգեստի վրայ, առան կուպրած պարանը և զգոյշ քայլերով դէպի պարտէզն իջան։

—Էն հառամզադին մտիկ արա է, շշնջաց Թաթոսովը իր ընկերներին,—ասես՝ ափիցար ըլի!

Երեքն էլ մտան մօտակայ թփի ետև և սկսեցին ականջ դնել։ Սակայն քաջքերի խօսակցութիւնը չէր լսւում, որովհետև նրանք միմեանց հետ կամաց շշնջում էին։

—Դուք էտի դաբանչէքը ու թոկը հադիր պահէք,—շշնջաց Թաթոսովը—իս էսղանց մէ ձէն տամ, տեհնիմ ինչ ին ասում, ան նրանց միտքն ինչ է... Համա մուղայթ կացէք, վուր փախչելիս մէ բաշ թոկը վիզները գցինք։

Դամբուլովն ու Թաթուլովը հաւանութիւն տուեցին Իսայի Իսայիչի առաջարկութեան։ Թուփը, որի ետև թաք էին կացել մեր սատանայբռնուները, շատ էլ հեռու չէր քաջքերից։ Թաթոսովը խաչակնքեց երեսը և, կծկելով թփի տակ, ասաց բարձր ձայնով.

—Բայրաջողում, ախպէր!

Սև սատանան քարացած մնաց. չըգիտէր թէ որտեղից էր այդ անսպասելի ձայնը։ Իսկ այդ բոպէին սպիտակ չարսաւով քաջքը դողդողաց և կպաւ սև քաջքի կրծքին։

—Ախպեր, թէ դուք դրուստ մարդ իք, էստի ինչ իք շինում էս կէս գիշերին?—շարունակեց Թաթոսովը։



Այգեբաղ. Բէյց գեսի պիերում.

Քաջքերը ոչ մի ձայն չըհանեցին։ Նրանք արձանացած լսում էին։

—Տօ, ձիզ իմ ասում, ալ.ք իք, սատանայ իք, քաջք իք թէ ինչ քարուքացախ իք! Խստի ինչ իք շինում? Ում հոգին իք էկի տանելու? Էկէք ու լօթիանայ ինձ դրուստն ասէք, իս օչովի բան չիմ ասի?.. Վահ, խլացել իք? Տօ, չիք իմանում?.. Տօ, խանի խարաբ, էս վրայ էրկու գիշիր է, ինչ իք թրև դալի իմ բախչումը? ինչ է, էկել իք իմ օղուշաղիս, իմ էրեխերքիս վախացնի? իժում ինձ ճանչնում իք? Իս պերուի գիլդի կուպեծ Թաթոսովն իմ, գիդիք? իս էն մարդն իմ, վուր սաղ դժուխքը վուտիս տակ կուտամ ու դիփ ձիր սատանէքի գլուխը խստորի նման կու տրորիմ!.. իս էն մարդն իմ, վուր դիփ չար հրեշտակներին, մահիրին խանջալով մէկ-մէկ թիքա-թիքա կ'օնիմ, դիփ կու կոտորիմ, կու փշրտիմ, կու խառնիմ մէկըզ-մէկու ու աջաբանդալի կու շինիմ!.. Հառամզադէք! պադլեցներ! գարադաւոյ!..

Այդ բոպէին լսեց մի կանացի ճչոց։ Սպիտակ սաւանով քաջքը տատանուեց և գետին փռուեց։ Իսկ սև քաջքը ուզում էր փախչել, երբ յանկարծ թփի տակից դուրս պրծան մեր սատանայ որսորդները, գոռում գոչումով վրայ ընկան, կուպրած թոկը գցեցին նրա վիզը և սպիտակ քաջքի հետ միասին ծառի ստուերի տակից քաշ տուեցին դէպի լոյսը։

—Վայ, Իսայի ջան! իս մեղաւոր իմ, սպանի ինձ!— գոչեց ողբագին ձայնով սպիտակ չարսաւով քաջքը։

Ամենքը ապշած մնացին, որովհետև ձայնը Նինոյինն էր։ Երբ ամենքը մի փոքր ուշքի եկան, տեսան որ սպիտակ սաւանի մէջ փաթաթուողը իսկ և իսկ Նինոն էր, Թաթոսովի կինը, իսկ սև զգեստ հագածը մի ինչ որ սպայ էր։

!!!???

Ցարութիւն Թումանեանց

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

VIII

Աշխատանքի տեխնիկական բաժանումը

—

Աշխատանքը շատ անգամ բաժանուում է և միևնոյն գործի, միևնոյն արհեստի մէջ. Սրանով մարդիկ առանձին անկախ կոչումներ չեն ստանում, այլ մի շարք զանազան գործ կատարողներ իրանց ոյժերը միացնելով գըլուխ են բերում մի գործ։ Օրինակ այն դերձակները, որոնք շատ օգնականներ և աշակերտներ ունին, իրանք դադարում են կար անել և բուսականանում են շարունակ ձեւելով։ Այստեղ ուրեմն աշխատանքը բաժանուած է վարպետի և աշակերտների մէջ. առաջինը ձևող է, իսկ երկրորդները կարող։ Նոյնանման բաժանում նկատուում է մեր երկրի դարբնանոցներում, ուր գլխաւոր վարպետը աւելի գործին ընթացք տալով է զբաղուում։ Օգնականը ուրիշ բան չէ անում, եթէ ոչ ահագին մուրճով հարուածներ է տալիս կարմրացրած երկաթին (վարպետի ցոյց տուածի համեմատ), իսկ աշակերտը բաւականանում է ահագին փուքսը վեր ու վայր քաշելով։ Հէնց աշխատանքի տեխնիկական բաժանման մէջն է կայանում արհեստանոցի և գործարանի գլխաւոր տարբերութիւնը։ Որքան մի արհեստի մէջ տեխնիկական բաժանումը սուր, որոշ կերպարանք է ստանում, այնքան աւելի արհեստանոցը գործարանի կերպարանք է ընդունում և այնքան աւելի վարպետը բանւոր է դառնում։

Մեր ընթերցողին հրաւիրում ենք լաւ ուշադրութիւն դարձնել այդ կէտին, որովհետև նրանից առաջանում են մեծամեծ սոցիալական խնդիրներ, որոնց մասին ապագայում խօսելու ենք։ Վարպետի եւ բանւորի մէջ ահագին տարբերութիւն կայ։ Կօշկակարը, գլխարկակարը, ոսկերիչը վարպետներ են։ Իսկ գրաշարը, ծխախոտ կտրողը, անիւ պտտեցնողը և այն վարպետներ չեն, այլ բանւորներ են։ Ինչու։ Որովհետև առաջիններից իւրաքանչիւրը անկախ արդիւնագործող է. կօշկակարը իր արհեստանոցի տէրն է և ինքն իր ձեռքով կարողանում է ամբողջ կօշիկներ պատրաստել և ծախել։ Հարկաւոր դէպքում նա կարող է շատ գործել կամ քիչ, վերջապէս ինքն իր աշխատանքի տէրն է, պատասխանատու ամբողջ գործի համար։ Իսկ բանւորը վարձկան է, կախուած է գործարանից (հետևապէս և գործարանատիրոջից), նա ոչ մի ամբողջ առարկայ չէ արտադրում, այլ միայն լրացուցիչ գործ է կատարում (օրինակ ուրիշների շինած գլանակներին մուշտուկ է խըփում)։ Եթէ գործարանը կանգնեց, բանւորը անկախ կերպով ոչինչ գործ կատարել չէ կարող։ Եթէ օրինակ հագուստի գործարանում մէկը միշտ կարելով է զբաղուած, գործարանից դուրս նա պարապ կըմնայ, որովհետև ձեւել չըգիտէ, ուստի և ոչ ոքի համար պատուէր վերցնել չի կարող։

Բայց առայժմ մի կողմ թողնենք սոցիալական խնդիրները և տեսնենք թէ տեխնիկական բաժանումը ինչպիսի ինչ օգտակար և վնասակար կողմեր ունի։ Նա օգտակար է այն տեսակէտից, որ ընդհանուր գործը աւելի արագանում է, նրբանում է և աւելի հեշտանում է իւրաքանչիւրի համար։ Մեծ կազմարաններում ներկայումս կան գործողներ, որոնք գըրքերը ոսկեգրում են, իսկ գիրքը կազմել չըգիտեն։ Նրանք ի հարկէ աւելի լաւ կ'ոսկեգրեն, քան թէ այն կազմարարը, որ համ կարում է, համ կազմըն է շինում, համ էլ ոսկեգրում։ Միւս կողմից միայն ոսկեգրութիւնը սովորելն աւելի հեշտ է, քան ամբողջ կազմարարութիւնը (ոսկեգրութիւնն էլ հետը)։ Բայց տեխնիկապէս բաժանուած գործը աւելի միատեսակ լինելով, աւելի սիրտ մաշող է, տխրեցնող է... շատ անգամ էլ առողջութեան վնասակար է... Ամբողջ օրը վարպետը մերթ ձեռքերով է գործում, մերթ մէջքով, մերթ ոտներով, մերթ կանգնած, մերթ նստած և այն։ Իսկ բանւորը շարունակ կամ ձեռքն է փչացնում, կամ աչքը (օրինակ գրաշարը), կամ միշտ նստած է լինում (որ խիստ վնասակար է առողջութեան համար)...

Որքան արդիւնագործութիւնը ծաղկում է, մարդիկ շատանում և հարստանում են, և պահանջն էլ աւելանում է, այնքան աւելի հնարաւոր է դառնում աշխատանքի տեխնիկական բաժանումը։ Եւ այդպէս շարունակե-

լով այնտեղը կըհասնի, որ վարպետութիւնը կըվերանայ և իւրաքանչիւր մարդ ստիպւած կըլինի մի խիստ միատեսակ «շարժումով» զբաղուել, օրինակ շարունակ անիւ պտըտացնել, կամ մուրճ խփել, կամ իւղ ածել մեքենայի վրայ, կամ աչքը տնկել մի որոշ կէտի վրայ և այլն և այլն։ Այդ բոլորը թէև շատ նպաստաւոր կըլինի արդիւնքի, գործի համար, բայց դժուխային կեանք կըդառնայ մարդու անձնաւորութեան համար։ Վարպետը իսկական մարդ է, միտք, խելք և ճաշակ գործ դնող աշխատաւոր է, մի տեսակ փոքրիկ «աստուած» է, քանի որ նա էլ usեղծագործում է։ Իսկ բանւորը մի մեռած ոյժ է, մեքենայ է, ֆիզիկական ոյժ գործ դնող մշակ է։ Նրա գործը չէ հասկանալ թէ գործարանը ինչ է արտադրում, այլ պարտաւոր է միայն մի անիւ պտըտացնել», ուրիշ ոչինչ։ Ի՞նչ անել ուրեմն...

Սրա հնարն էլ գտել են Ադամի որդիները։ Որքան աշխատանքը տեխնիկապէս աւելի է բաժանւում, նոյնքան աւելի հնարաւոր է լինում մեքենաների գործադրութիւնը։ Դժուար է այնպիսի մեքենայ հնարել, որ ամբողջ կօշիկ կարէ, բայց կարելի է հնարել մեքենաներ, որոնցից մէկը կըկարէ, միւսը կըկարէ և այլն։ Հաստատ կարելի է ասել, որ մեքենաները իսկապէս աշխատանքի տեխնիկական բաժանման պտուղներն են և կոչւած են միակողմանիութիւնից փրկելու բնութեան թագաւորներին։ Եւ այդպէս մարդու գործունէութեան ֆիզիքական մասը հետզհետէ մեքենային և բնական ոյժերին յանձնելով, մարդու համար կըմնայ ծրագիր կազմելը, չափ ու սահմաններ որոշելը. մի խօսքով գործի զուտ հոգեկան մասը, որ չէ պահանջում ձեռքի և մկանների յոգնածութիւն, այլ պահանջում է միտք, ճաշակ, հնարագիտութիւն .. Քամին, ջուրը, շոգին, էլեկտրականութիւնը... փոքր առ փոքր ստանձնում են մարդուն հարկաւոր ամբողջ ֆիզիկական գործունէութիւնը, թողնելով նրա համար զուտ usեղծագործութիւնը, որ մարդկային ցեղի իսկական կոչումն է։

Հիւլէ

գեղարուեստ

ՏԱՂԱՆԴ ԵՒ ԱՂԽԱՏԱՆՔ

(Թուրեանի մահուան առթիւ)

«Տաղանդները թաղել հեշտ է, բայց ծնել՝ դժուար». սրան լաւ ապացոյց է Թուրեանի կեանքը, որ ամբողջ իր միջավայրի պատմութիւնն է։ Նա սերտ կապակցութիւն ունի այն մի խումբ մարդկանց հետ, որոնք դերասաններ և դերասանուհիներ կըկոչւին. այդ կեանքը մի էվոլիւցիա է հրեսուներամեայ անիրոնջ գործունէութեան, որ բեղմնաւորելով իր շրջապատողներին ծնաւ տաղանդ — Թուրեանը։

Որքան տարբերութիւն ունի այդ տաղանդ-Թուրեանը այն պատանիից, որ 1860 թուականին 20 տարեկան հասակում առաջին անգամ բեմ դուրս եկաւ մի ինչ որ սիրահար նաւապետի դերում *)։ Այն ժամանակ նա կատարում էր մի հետաքրքրական գործ, որ հետաքրքիր էր միմիայն իրան համար կամ գոնէ ինքն այնպէս էր մտածում, մինչդեռ այժմ նա կատարում էր մի գործ, որ օգտակար և կրթիչ ազդեցութիւն ունէր ժողովրդի վրայ. այժմ էլ այդպէս էր մտածում հէնց ինքը։ Ինչպէս վերոհիշեալ էր դերասանը երեսուներամեայ գործունէութեամբ, որի վրայ ազդում էր և միջավայրը։

Այն թուականներին Թատրոնի դաղափարը մի հետաքրքրական միտք էր, որ ծնունդ առաւ իտալական և ֆրանսիական կեանքին ծանօթ անհատներից *) և հէնց այդ անհատներն էին, որ առաջին անգամ ջանացին հիմնել Թատրոն և Թատրոնի գաղափարը իրականացնել։ Դրա համար կազմուեց Թատերասէրների խումբ։

Նոր կազմւած խմբի դերասանները, որոնցից էր նաև Թուրեան, յայտնի և փորձառու անձեր չեն եղել։ Նրանք բոլորն էլ ուսումնարանական շրջանում դպրոցական ներկայացումների ժամանակ յաջողութիւն գտնող պատանիներ են եղել, շատ քիչ բացառութեամբ, և գրեթէ Մխիթարեան ուսումնարանի ազդեցութիւնը կրող մարդիկ։ Ռէժիսորը իտալացի էր և իտալերէն լեզուով էր դեկաւարում։

Թուրեան՝ երբ յիշում էր առաջին ներկայացումները, ծիծաղում էր, և իսկապէս Թատրոնի նշանակութիւնը հասկացող մարդը չէ կարող չըծիծաղել։ Նա և առհասարակ բոլոր դերասանները դեռ չէին զգում թէ ինչ ոյժ ունին և թէ ինչ բանում յաջողութիւն կարող են ունենալ կամ աւելի լաւ է ասել չէին գիտում, թէ իրանք ինչ են։ Թուրեանը բեմի վրայ այնպէս էր խաղում, ինչպէս խաղում էին այն ժամանակուայ թիւրք դերասանները բաsrոն կոչւած տների բեմի վրայ, եթէ կարելի է, նրանց Թատրոն անուանել։ Այդպիսի Թատրոններ այժմ էլ կան Թրքական յետ ընկած գաւառներում։ Այնտեղ դերասանը աշխատում էր միմիայն ծիծաղացնել, որովհետև հանդիսականները գնում են այնտեղ միմիայն ծիծաղելու համար։

«Ընդհանրապէս որ առաջին անգամները — ասում էր Թուրեանը — խաղում էինք միմիայն ծիծաղեցնելու համար, բայց ես միշտ աշխատում էի ծիծաղաշարժ դերերում անգամ դրամատիկական էֆֆէկտ առաջ բերել, և դրանով ծիծաղելի և միանգամայն ապուշ

*) „Երկու յիսնապետներ", Գուսթաւոս։

*) Այդ անհատներից էին Ալթուն-Տիւրբի, Գր. Փրէնկեան, Յարութիւն Մերիէմ-Գուլի, Վրոյր։

Ասխատասուէր տատը

էի դառնում Հանդիսատեսների առաջ»։

Ո՞րքան ճշմարիտ են այդ բառերը նկարագրում այն ժամանակուայ դերասանի ձգտումն և հոգին։ Ֆրանսիական մելոդրաման ազդել էր խեղճ պատանիների վրայ, և նրանք կաշկանդած էին դրամատիկական էֆֆէկտների արտաքինով, ուստի աշխատում էին իրանք էլ միևնոյն ազդեցութիւնն անել ժողովրդի վրայ և դրաման բոլորովին չիմար մի բան էր դառնում, սակայն արտաքին էֆֆէկտով ազդում էր ժողովրդի վրայ։

Դերասանական խմբի մէջ առհասարակ բոլորն էլ ծափահարում էին. լաւ և իսկական գնահատողներ չէկային։ Լաւ անուն շինեցին նրանք, որոնք Հէքիմեանի կամ Նարբէյի ազգային պատմութիւնից հանած կլասիկ ողբերգութիւններում ազգային հերոսների դերեր էին խաղում։

Թատրոնը բաւական յաջողութիւն ունեցաւ սկզբում, բայց այդ յաջողութիւնը երկար չտևեց, որովհետև դերասանները հետզհետէ աւելի ու աւելի նուրբ էին խաղում. ժողովուրդը սառեց, որովհետև աշխատում էին թատրոնի բեմից ծիծաղել կամ լաց լինել նրա թերութիւնների և ցաւերի վրայ և բոլորովին հեռացան թատրոնից, երբ դերասանները սկսեցին աւելի տիպիկական դէմքեր ստեղծել, որոնց առաջ Հանդիսատեսը՝ փոխանակ առաջուայ նման չիմարաբար ծիծաղելու, ծիծաղկոտ դէմքի վրայ սմօթի այրոյցքն էր զգում։ Իսկ դրանց համար նա փող չէր կարող տալ և աւելի լաւ կընտրէր վերև յիշածս թրքական այլանդակ ներկայացումները տեսնելու։ Այդ գցեց դերասաններին անել դրութեան մէջ։

«Այնուամենայնիւ—ասում էր Թուրեանը—մենք գրեթէ անդիտակցաբար մեզ կատարելագործում էինք»։

Թուրեանը յիշելով այդ տարիները, պատանեկան բուռն ոգևորութիւնը, այժմ էլ ոգևորւում ու երիտասարդանում էր։ Նա շատ անգամ պատմում էր այդ կեանքից և շատ էր ուրախանում որ այն ժամանակուայ թատերամոլ Թուրեանը իսկապէս դերասան է դարձել։

Պոլսում նիւթական անբաւականութիւն գտնելով՝ դերասանները գնացին Զմիւռնիա, ուր արդէն սիրողները սկսել էին ներկայացումներ տալ մի քանի տարուց ի վեր «Վասպուրական» թատրոնում, և ուր իրանց անկանոն կարգապահութեան պատճառով նոյնպէս յաջողութիւն չ'ունեցան։ Նրանցից գլխաւորները նիւթական այլ և այլ խնդիրների համար անհամաձայնութիւն ունենալով իրար հետ, թողին ու հեռացան Զմիւռնիայից. մնացին մի քանի երկրորդական դերասաններ, որոնցից էր և Թուրեանը։ Վերը յիշածս պատճառները Թուրեանին դասում էին երկրորդական կամ միջակ դերասանների շարքում, որովհետև ինքը կոմիկ լինելով, երբ չանում էր դրամատիկական գոյն տալ իր ծիծաղին, բոլորովին փչացնում էր խաղը։ Դրա համար էլ իր նպաստին տրուած ներկայացումը չկարողացաւ գլուխ բերել։ Նա մտաւ ֆոտոգրաֆի մի գործանոց և նկարչութեամբ սկսեց պարապել, երբեմն երբեմն մասնակցելով նաև թատերասէրների ներկայացումներին։

Թէ միջավայրը որքան ազդում է մարդկանց վրայ, այդ շատ ծանօթ երևոյթ է կեանքի մէջ. այդքան ծանօթ երևոյթ է և՝ Հանդիսատեսի ազդեցութիւնը դերասանի վրայ։ Թուրեան իբրև մարդ ազդուեցաւ միջավայրից և իբրև դերասան Հանդիսականներից, և դրանց վրայ աւելացնելով աշխատանքը, մենք կունենանք տաղանդ Թուրեանի բուն իսկ ծնողքը։ Նա ապրել էր Պոլսոյ հրաշալի բնութեան մէջ։ Նա ապրեցաւ գեղարուեստի աշխարհում—Իտալիայում. նա տեսաւ Վենետիկում համաշխարհային գեղարուեստը և նա դարձաւ դերասան։ Դրանցից պարզ երևում է, որ Թուրեանը գեղարուեստասէր էր, երբ մտաւ թատրոնական խմբի մէջ, և այդ սէրը հետզհետէ զարգացաւ։

Թուրեան վերև յիշածս հանգամանքներում թէև չանում էր իր խաղերին դրամատիկ գոյն տալ, միշտ աշխատում էր դրամատիկ շորեր հագնել, այնուամենայնիւ նա ինքն իր դէմ բողոքում էր։ Այդ այն ժամանակ յայտնի եղաւ, երբ թողեց իր պատանեական ցնորամիտ ձևերը և սկսեց հետզհետէ աւելի բնական և տիպիկական խաղալ։ Զմիւռնիայում նիւթապէս ապահովուած, երբ մասնակցում էր թատերասէրների ներկայացումներին կամ Պոլսում Վարդովեանի խմբի հետ օրական մասնաւոր վարձ ստանալով խաղում էր, հետզհետէ թողնում էր ժողովրդին հաճելի լինելու և նրա ունայն զգացումները շոյելու ձևերը։ Այդ միտքը հետզհետէ ամրանում էր և միմիայն մնում էր մի առիթ, որ օգնէր այդ մտքի կատարեալ յաղթանակին, որ ազատէր նրան մելոդրամաների ձեռից և ձգէր լուրջ կատակերգութեան ասպարէզը։

Թուրեանին հետևելով մենք տեսնում ենք նրան Նոր-Նախիջևանում, Կ. Պոլսում, Սալոնիկում և վերջապէս Բրուսայում և իւրաքանչիւր տարի նրա խաղերի մէջ նկատւում է փոքրիկ կամ հսկայ քայլեր մելոդրամայից դէպի կոմէդիա, մինչև որ Բրուսա-

յում, 1880-ին, քսան տարի ջեմին ծառայելուց յետոյ, նրանում կազմւում է իսկական կոմիկ դերասանը։ Թուրեան Մոլիէրի հերոսները ստեղծելով՝ դասւեցաւ իսկ և իսկ առաջնակարգ դերասանների շարքում, հասկացւեց որ նա ոյժ է, նա ստեղծագործող է, նա դերասան է, նա ծնող է, որովհետև քսան տարուայ երկար երկունքից յետոյ նա ծնել էր իրան տաղանդ-Թուրեանին։

1880 թուականից յետոյ մենք Թուրեանին տեսնում ենք ամեն տեղ, ամեն ժամանակ. նա դրանից յետոյ էլ ճանապարհորդեց երկար, նա եղաւ Բուլղարիայում, Թիֆլիսում, այցելեց Եգիպտոս, Ադրիանապոլիս, Սալոնիկ, Զմիւռնիա, Աթէնք, Պիրէ - այլև այլ օպերէտային և դրամատիկական խմբերով. 1891-ին եկաւ Թիֆլիս, ուր մնաց 1891—92 թատրոնական սէզոնին, յետոյ կրկին սկսեց այս ու այն կողմ թափառել մինչև որ 1897—98 սէզոնի համար Բագուից հրաւիրւեց։ Այդ 18 տարուայ շրջանում մենք նրան այլևս չենք տեսնում չիմար մելոդրամաներով բեմ գալիս, նա այլևս կոմիկ էր, նա զմայլեցնում էր հասարակութեան գոհարներով. նա կապում էր շատերին թատրոնի հետ, իր «Դոն-Գրիգորիо»-ով, «Սկապէնի ատարֆներով», «Ագահով» և ուրիշ սրանց նման հրաշալի ստեղծագործութիւններով։ Թուրեանն անխոնջ աշխատող էր, մինչև վերջն աշխատում էր իր խաղը լաւացնել, աւելի յաջող տանել, և ինչ զարմանալի ազդեցութիւն արեց մեզ վրայ 1898-ին, 58 տարեկան հասակում, երբ երիտասարդական ոգևորութեամբ Սկապէնի խաղախութիւնների մէջ, երիտասարդ դերասաններից աւելի աշխուժով էր խաղում։ Դափիսհարութիւնները անվերջանալի էին, որովհետև հանդիսականները զգում էին որ նրա ոգևորութիւնն ու կրքերն անջնջելի և անփոփոխելի են։

Դ. Եղիկեան

ՄՍՐԴՈՒ ԲՆԱԾԻՆ ՀԱԿՈՒՄԸ

—

Թատրոնից ստացած զարմանքը, ասում է մի յայտնի քննադատ, նման է այն զարմանքին, որ մարդս ստանում է իր մերձաւորի թշւառութեան և նեղութեան, դիտելու միջոցին, ինքն այդ տանջանքներից հեռու պահելով և այդ ամենից իրան ապահովացրած համարելով, Լուկրէցիայի ասածի պէս. «Հաճելի փոթորկի, հողմի, լեռնացող ալիքների ժամանակ նայել ափից մերձաւորի ահեղ թշւառութեան վրայ»... Այդ մեր բնածին կամ թէ ստացական չարութեան և դաժանութեան հետևանքն է։ Դրամատիկական գեղարուեստի ամբողջ էութիւնը, նոյն քննադատի կարծիքով, կայանում է մարդկային թշւառութեան, նրա տրագիկական և կոմիկական տեսակէտից պատկերացման մէջ։ Տրագէդիան խիստ դժբախտութեան պատկերացումն է, իսկ կոմէդիան ծիծաղաշարժ դժբախտութեան պատկերացում։ «Ես ներկայ էի, ասում էր թատերասէրը, «Կամելիազարդ տիկին» և «Պաղտնի ոյժ» ներկայացումներին. շատ տխուր պիեսներ են։ Ես լաց եղայ»։—Ի՞նչու։ «Նրա համար, որ մի տեղ կինը անլոյս սիրուց թոքախտ է ստանում և մեռնում. իսկ միւս տեղ ամուսինը նախանձից սպանում է իր կնոջն ու ինքը խելագարւում և այլն։ Եւ դուք գնացիք այդ ամենը նայելու։ Բարի մարդ չէք։—«Բայց ես լաց եղայ»։—Այդ արդարանալու միջոց չէ. այնուամենայնիւ ձեր սեփական ցանկութեամբ և փողով զարմանքն էք ստացել այդ տեսակ սարսափելի տեսարանից։ Դուք հրճւել էք մերձաւորի դժբախտութեան վրայ. ուրեմն դուք չար մարդ էք։ Տէնը կասէր թէ, ձեր մէջ կայ «կատաղի Գորիլլայ»։ Դուք, ի հարկ է, գիտէք, որ Տէնը մարդուն կոչում է «քիչ փոփոխւած կատաղի և վաւաշոտ Գորիլլայի սերունդ»։ Վաւաշոտ Գորիլլան հրճւում է կոմէդիայով, իսկ կատաղին՝ դրամայով։ Սրա մէջն է բոլոր էութիւնը։ Ի հարկէ, ես մի քիչ չափազանցացնում եմ, որովհետև մարդը նոյնպէս «հեռու սահմանից բռնւած կասիկ է»։ Բայց իսկապէս արդարութիւնն իմ կողմն է. մարդը, երբ տրագէդիայի ներկայ է լինում, օտարի թշւառութիւնից զարմանքն է ստանում։ Արդեօք տեսնում ենք բեմի վրայ երբեւիցէ մարդկային երջանկութեան պատկեր։ Ոչ, երբէք. այդ մեզ այնքան չի հետաքրքրում։ Հրգիտենք ով է ասել՝ «Գիտէք ինչու կոմէդիան վերջանում է հարսանիքով—որովհետև հարսանիքից յետոյ սկսւում է արդէն տրագէդիան»։ Ուղիղ է ասւած, բայց այդ քիչ է. պէտք աւելացնել ևս, որ նոյն կոմէդիան դժբախտութեան պատկեր է,—մինչև անգամ այն դէպքում, երբ նա զաւեշտական բնաւորութիւն է ունենում։ Նա մեր առաջ բաց է անում ամբողջ մի շարք, ենթադրենք, փոքր նսեմ, բայց այնուամենայնիւ տանջանք, օրինակ սիրահարւած զոյգ, որոնք ցանկանում են ամուսնական կապով միանալ և այդ նպատակին հասնելու համար զանազան արգելքների են հանդիպում։ Հէնց որ այդ արգելքները հեռանում են—կոմէդիան վերջանում է. սիրահարները կամուսնանան, երջանիկ կըլինեն, այդ մեր գործը չէ։ Ամուսնական առաջի ամիսը մեզ հետաքրքիր է լինում այն ժամանակ, երբ ամուսինների մէջ դժգոհութիւն է նկատւում։

Այսպիսով մարդկային երջանկութեան տեսարանը մեզ այնքան չէ հետաքրքրում, իսկ տանջանքի, թշւառութեան տեսարանը ընդհակառակը գրաւում է մարդկանց։ Դրա համար էլ թատրոնը հանդիսանում է սարսափելի կամ ծիծաղելի, փոքր թէ մեծ դժբախտութեան տեսարան։ Միևնոյն բանը նկատում ենք գրականութեան միւս ճիւղի մէջ, օրինակ, վէպերի մէջ. «կանայք, որոնցով միշտ հարկաւոր է մարդկութեան մասին դատել, որովհետև նրանք «մշտական» մարդիկ են, աւելի դանդաղ են զարգանում, ուստի և նախնական մարդուն մօտենում են և համարեա թէ մարդկութեան անփոփոխ տարր են ներկայացնում,—կանայք, մտնելով գրատուն, առանց նախօրօք որոշելու թէ ինչ գիրք պիտի վերցնեն, միշտ հարցնում են այնպէս գիրք, որի վրայ կարելի է լաց լինել։ Նրանք սիրում են լաց լինել։ դրա համար ժողովւում են միասին և սովորաբար հեշտութեամբ հասնում են իրանց նպատակին. .» Այսպիսով, և թատրոնը, և ընդհանրապէս զգայուն գրականութիւնը, և պօէզիան,

և կանանց խօսակցութիւնը կամ զգայուն մարդկանց,—նիւթ են ունենում մարդկային թշուառութիւնը։

Ուրիշի տանջանքներով զուարճութիւն ստանալու աղբիւրը, նոյն քննադատը համարում է ճշմարտութեան ձգտելու նպատակը. «Թատրոնի բեմը պէտք է որ ճշմարտութիւն քարոզէ, և դրա համար նա տխուր է» –մինչև անգամ այն դէպքերում, երբ մենք գնում ենք այնտեղ «զուարճանալու համար»։

Ադ—Ռար

ՈՒՐԱԽԱԼԻ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

(Մարաղայից)

Զուտով այստեղ պիտի կազմակերպւի մի խումբ՝ որ իր վարչութեան տակ պիտի առնէ տեղոյս թատրոնական, գրադարանի և այլ հանդէսների, դրական երեկոների գործը, որոնք հանդիսանում են հասարակութիւնը կրթող միջոցներ։ Պէտք է խոստովանած որ, թէև տարիներ առաջ այստեղ գոյութիւն է ունեցել ընթերցարան, այսինքն՝ ուզում եմ ասել, որ 150—200 կոոր գրքեր ունեցել է Մարաղան, բայց այդ գրքերը միշտ դատապարտւած են եղել մութ նկուղներում փտելու, փոշիակեր լինելու։ Երբևիցէ կանոնաւոր ընթերցարան բառի բուն նշանակութեամբ այստեղ գոյութիւն չի ունեցել, այլ միայն լոկ անունով։ Իսկ թատրոն, հանդէս և այլն մինչև անցեալ տարի անծանօթ էին Մարաղացուն։ Խումբն արդէն սկսած է կարգի տակ դցել ընթերցարանը և ծրագիրներ կազմել ապագայ ներկայացումների և հանդէսների համար։ Ներկայ յօդւածով մենք խօսքներս մասնաւորում ենք թատրոնի վրայ, որ միւսներից աւելի գերադաս ենք համարում Մարաղու ժողովրդի համար։

Կազմակերպելիք խումբը մոռադիր է աշնան սեզոնը սկսելուց մի շարք ներկայացումներ տալ թէ ի նպաստ նորակառոյց դպրոցին Նիւթապէս՝ և թէ Մարաղայի տգէտ ժողովրդի մտաւոր զարգացմանը՝ բարոյապէս։ Նախ քան խմբի կազմակերպելը և ներկայացումների սկսելը՝ մենք աւելորդ չենք համարում մեր համեստ խորհուրդները դնել յարգելի խմբի սեղանի վրայ, որպէս զի իրանց ապագայ գործունէութիւնը ունենայ յաջող և արդիւնաւէտ հետևանքներ։

Կար ժամանակ—և այդ էլ մօտիկ անցեալում—որ ոչ միայն խաւար Պարսկաստանում՝ այլև արևմտեան երկրներում թատրոնը ընդունւում էր որպէս մի անբարոյականացուցիչ հաստատութիւն, ներկայացուցիչները՝ որպէս զանազան սրիկայական նպատակներով շաղախւած սյինբազութիւններ, իսկ դրանց պաշտպան-ներկայացուցիչները նկատւում էին որպէս բոկից փախած բախտախնդիրներ։ Դրանց երդւեալ հակառակորդները ոչ մի անազնիւ միջոց չէին խնայում քանդել, հիմնայատակ անել այդպիսի հաստատութիւններ, խայտառակաբար վռընդել դրանց ղեկավարներին... Բայց անցան, գնացին այդ ժամանակները, հասարակական զարգացման պրոցէսը մի քայլ առաջ անցաւ և այդ երդւեալ հակառակորդները չքացան ինչպէս մի ասուպ թողնելով իրանց ետևից մի սև գիծ... Դուրս եկան տաղանդներ, հանճարներ, որոնք ցոյց տւին հիասթափ ժողովրդին, ամեն մի նոր երևոյթից խրտնող ամբոխին, որ թատրոնն ոչ թէ անբարոյականացուցիչ մի հաստատութիւն է՝ այլ ընդհակառակը, նա հասարակութիւնը կրթող գլխաւոր ֆակտորներից մէկն է, ներկայացումը՝ մի հայելի է, որի մէջ մարդ տեսնում է իր պատկերը՝ իր բոլոր պակասութիւններով և առաւելութիւններով. իսկ դրա պաշտպանած-ղեկավարները՝ ինտելլիգենտ անհատներ են, ճնշւած, կեղեքւած ժողովրդի ցաւերին թարգման-նախանձախնդիրներ, որոնք ընդունում են հասարակութեան շնորհակալիքը, կատարում են յոբելեաններ, ժառանգում են յարգանքներ։ Այսօր ոչ միայն Եւրոպայում, այլ և Պարսկաստանի (Ասիա) նման խաւար անկիւնում անգամ չի գտնւիլ մի խելքը գլխին անհատ, որ հակառակ լինի թատրոնի և առհասարակ դոյնանման հաստատութիւնների, այլ ընդհակառակը, բոլորի մէջ կարելի է նկատել մի տեսակ սէր, համակրանք դէպի այդպիսի հիմնարկութիւններ, որոնք հանդիսանում են հասարակութիւնը կրթող միջոցներ։

Առհասարակ ներկայացումները աւելի նպատակայարմար են այն անկիւններում, ուր ժողովուրդը միջոց չի ունեցել կամ չունի որոշ կերպով դաղափար կազմել կեանքում տեղի ունեցած լաւ և վատ տիպերի վրայ, և որ գլխաւորն է՝ նա միանգամայն անտեղեակ է իր պատմական անցեալին... Այդպիսի ժողովրդի վրայ ներկայացումները մեծ ազդեցութիւն կարող են ունենալ, նրանց մտաւոր-բարոյական զարգացմանը զգալի զարկ կարող են տալ։ Կենդանի խօսքը, կենդանի պատկերը այդպիսի ժողովրդի համար աւելի մատչելի է քան զանազան փիլիսոփայութիւններ՝ զարդարւած եւրոպական բառերով...

Այդ բոլորը լաւ է ի նկատի առել Մարաղու փոքրաթիւ ինտելիգենցիան։ Մարաղացին այսօր անտեղեակ է գրական խրթին բարբառին, նրան հարկաւոր է կենդանի, նրա հասկացողութեան մատչելի լեզուով խօսել, որպէս զի կարողանայ մի բան հասկանալ։ Մարաղու և շրջանի հայերին, որոնք կազմում են պատկառելի թիւ, անհրաժեշտ է գոնեա ներկայացումներով, հանդէսներով փոքր ի շատէ գիտակցութեան ուղիի վրայ կանգնեցնել։ Բայց ինչպէս որ ասացինք քիչ վերև՝ եթէ այդ խումբը ուզում է յաջողութիւն գտնել և արդիւնքներ ցոյց տալ՝ պէտք է իր ծրագրի մէջ ունենայ հետևեալ անհրաժեշտ պայմանները.

1. Խմբի մէջ մտցնել այնպիսի անհատներ՝ որոնք միանգամայն անկախ լինեն զանազան «կապրիկաւոր» աղաներից, որոնք ինչ-ինչ քմահաճոյքներից դրդւած կարող են իրանց veto-ն դնել և ամենակրիտիկական բոպէին խմբից անջատել։ 2. Խմբի մէջ մտցնել անպատճառ բնիկ Մարաղացի երիտասարդներ, որ գործը հիմք ունենայ և վերջը մի արդիւնք տայ. մեր բոլոր ջանքը և ուշադրութիւնը պիտի կենդրոնացնենք միմիայն Մարաղացու յառաջադիմութեան համար։

3. Բեպերտուարի առաջին տեղը պէտք է տալ պատմական պիէսներին, թող խումբը ի նկատի ունենայ թէ անցեալ անգամ «Արշակ Բ.»ը ներկայացնելուց Մարաղացին որպիսի հետաքրքրութեամբ և լարւած ուշադրութեամբ հետևում էր պիէսի ամեն մի կէտին, այնպէս որ իրանց անցեալից անտեղեակ Մարաղացի պատանիները նոյն տպաւորութեան տակ մի շաբաթ փողոցներում ոգևորութեամբ ներկայացնում էին իրանց տեսածները և ուրախացնում իրանց ծնողներին... 4. Տոմսակների գինը որքան կարելի է, էժան

նշանակել, որպէս զի նիւթականից սուղ Մարաղացին կարող լինի շարունակ յաճախել թատրոն և իր հետաքրքրութեանը յագուրդ տալ։ Իսկ Թաւրիզեցի վաճառականների համար կարելի է արժէք պահանջել ըստ պատշաճի։ 5. Աշխատել, ինչպէս որ լինի, յարմարութիւններ տալ իգական սեռի բեմ դուրս գալուն։

Միմիայն այդ անհրաժեշտ պայմանները մտցնելով ծրագրի մէջ՝ խումբը կարող է զգալի արդիւնքներ տալ։

Մ. Ցէր-Յակովբեան

—

ԵՐԵԿՈՅԹ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐԵՐՈՎ

—

Սեպտ. 3-ին տեղիս երկսեռ երիտասարդ սիրողների մասնակցութեամբ տեղի ունեցաւ մի երեկոյթ, հայկական պարերով։ Առաջ Ներկայացրին Կրոբ-կրոբ վոդեւիլը, թէպէտ և ոչ այնքան յաջող։ Եւ ապա սկսեցին հայկական ժողովրդական երգերը. վարագոյրը բարձրացաւ, աշուղ Պայծառէն չափ էր նւագում թառի վրայ, որ միանգամայն անյարմար էր. աւելի լաւ կանէր, որ նա միայն երգերի վերջաւորութիւնը նւագէր, յետոյ ի հարկէ խումբը կ'երգէր, բայց այդպէս չանելու պատճառով մի խառնիխուռն բան էր դուրս գալիս, ձայների շփոթութիւն, յետ ու առաջ ձայներ։ Խմբի երգեցողութեան վատ կողմերը ծածկեց պ. Սրշ. Յարութիւնեանցի Մաշարոսիական երգերը, որոնք տպաւորութիւն թողեցին. պ.-ին վարձատրեցին բուռն ծափահարութեամբ, երկրորդ անգամ բեմ հրաւիրելով։ Ապա սկսեցին հայկական պարերը. խումբը զարդարած էր բուն հայկական շորերով, աւելի աչքի էին ընկնում օրիորդաց զգեստները, որոնք շատ լաւ ճաշակով պատրաստած էին։ Օրիորդներն ու տղաները խառն շրջանակ կազմած պարում էին, առաջ մի քիչ թոյլ, բայց հետզհետէ, ոգևորուեցին և լաւ պարել սկսան։ Երաժշտական խումբը նւագում էր թառիքամանչի, դայիրայի և նաղարայի վրայ։ Ժողովուրդը յափշտակուած նայում էր պարողներին. նա առաջին անգամն էր տեսնում բեմի վրայ հայ աղջկան և տղին պարելիս։ Մասնակցող սիրողների մէջ, առանձին գովասանքի արժանի է խմբի ղեկավար գիմնազ. աշակերտուհի օր. Ղալէչեանցը, որ շատ աշխուժով երգում և պարում էր։ Ժողովուրդը նրան ընդունեց կեցցէներով և ծափահարութիւններով։ Ժողովուրդը թատրոնից դուրս եկաւ լաւ տպաւորութեան տակ. շատ ցանկալի է որ այդպիսի երեկոյթներ շուտ-շուտ տեղի ունենային։

Ա.ր. Մ.

Շուշաւեր

—

Աշխարհագրական

ԱՆԴՐԿԱՍՊԵԱՆ ԵՐԿԻՐ

II

ԱՍԽԱԲԱԴ

Մենք մեր անցեալ նամակում ամփոփ կերպով նկարագրեցինք Ասխաբադի արտաքին տեսքը, բայց ճշմարիտը խոստովանած, մի քանի բան նկատի չենք առել, ուստի և Ասխաբադի արտաքին տեսքը չի արտացոլում մեր նկարագրութեան մէջ։ Այդ նկարագրութեան ընթերցողը անշուշտ կըկարծէ—չըլլինի՞ թէ Եդեմը Ասխաբադ լինի փոխադրուած. ոչ, յարգելի ընթերցող, Ասխաբադը, ինչպէս ըստորև կըտեսնենք, հանդերձ իր առաւելութիւններով ունի և պակասաւոր կողմեր։

Ինչպէս որ յատուկ է Միջին Ասիային՝ Ասխաբադի կլիման աւելի տաք է. ամառը տաքութիւնը, ըստ Ռ.-ի 55—58°-ի է հասնում. սարսափելի շոգերի պատճառով մարդ չըգիտէ ուր փախչէ, մարդու սիրտ ուզում է պատրուի. արեգակի կիզիչ ճառագայթները ամենուրեք հաւասարապէս տաքացրել է, խուսափելու տեղ չըկայ, մնում է հանգիստ նստել, եթէ միայն հնարաւոր է, և քափ ու քրտինքի մէջ մտած սպասել աշնան պարզ գիշերուայ զով եղանակներին, որին թերևս շատերը երևակայելիս լինեն։

Անկասկած ընթերցողը՝ կարդալով ամառուայ նկարագրութիւնը, այնպէս կըկարծէ, որ մենք, ինչպէս բնականաբար ամեն մի տաք երկրում, ձմեռուայ երես չենք տեսնում. ոչ, այդպէս կարծողները ևս չարաչար սխալուած կըլինեն։ Երբ Միջին Ասիայի անապատից քիթ ու պռունգ սառցնող քամին վզզացնում է, ես աւելի յարմար կըհամարեմ, ընթերցող, վերարկուիս մէջ փաթաթուել ու մտնել տաք սենեակս, եթէ չեմ ուզում, որ լեզուս բերանումս սառուց կըտրուի։ Ուրեմն բանից ինչպէս երևում է, այս. տեղ այնքան էլ ձեռնտու չէ ամառ, ձմեռ ապրել։ Սարսափելի շոգեր և նոյնքան էլ վատ ցրտեր, և այդ ծայրայեղ փոփոխակի եղանակների պատճառով տարափոխիկ հիւանդութիւնները և ջերմ ու տենդը միշտ անպակաս են լինում։

Երբոր հիւանդութիւնների մասին ակնարկեցի, ապա և հարկաւոր է մի երկու խօսք ասել հանրահռչակ Ֆինդինկայի մասին։ Դեղեցիկ սեռի այդ սարսափելի թշնամին մի կատարեալ անկոչ հիւր է. դրա համար ոչ ցուրտ և ոչ տաք եղանակ է հարկաւոր, այլ, մէկ էլ տեսար, քթիդ, ականջիդ, կամ երեսիդ մի մասին արդէն դրոշմուեց. դէհ, արի ու ամբողջ տարի ու կէսից մինչև երկու տարի սպասիր թէ երբ կըբարեհաճէ Ֆինդինկան չքանալ երեսից։

Ֆինդինկան երկու տեսակ է—թաց և չոր Ֆինդինկա. թէ որտեղից կամ ինչ կերպ է առաջացել—դա մեզ անյայտ է։ Սակայն մենք, մեր՝ տարիների ընթացքում՝ մասնաւոր դիտողութիւններից այն ենք եզրակացնում, որ Ֆինդինկան անշուշտ Պարսկաստանից պէտք է բերուած լինի։

Անդրկասպեան երկաթուղու վրայ մի կայարան կայ, որ Ֆինդի է կոչւում։ Ասում են, թէ սրանից մի տասը տարի առաջ Ֆինդինկա վերքի հայրենիքը այդ կայարանի շրջակայքն է եղել, բայց ժամանակի ընթացքում վարակելով ուրիշ տեղեր՝ վարակել է և Ասխաբադը։ Ֆինդինկայի յառաջխաղացման ընթացքը այժմ, շնորհիւ հաղորդակցութեան յարմարութեան, աւելի արագ է տարածւում. Ղզլ-Արւադը և Կրասնավոդսկին, որ մի ժամանակ գաղափար անգամ չունէին, այսօր նոյնպէս վարակուած են Ֆինդինկայով։ Մենք կարծում ենք, որ Բագուն իր հարստութեամբ դժուար թէ կարողանայ խուսափել մեր Ֆինդինկայից.—վաղ թէ ուշ նրանց քրթին էլ փառաւոր կերպով պէտք է բազմէ։

Այդ սարսափելի, բայց ոչ վտանգաւոր վերքը դուրս է գալիս մարմնի բաց տեղերում. նախ մի փոքր բիծ է լինում ու յետոյ փոքր առ փոքր մեծանալով դառնում է մեծ վերք ու սկսում է թարախ հոսել։ Բախտաւոր է այն անձն, որի վրայ չոր Ֆինդինկա է դուրս գալիս ու թարախ չէ հոսում. վայն էլ տարել է նրան, որի քթին է բազմում, քիթն այնպիսի ահռելի տեսք է ստանում, որ մարդ սարսում է նայելուց։ Մարդու քիթը առաջ կարմրում է ու յետոյ այնքան

ուրչում, որ մեր Սիփանի չափ է դառնում. այս փինդինկան, կարծես, դարաւոր թշնամութիւն ունի մարդկութեան քթերի հետ։

Անցեալ անգամ ես մի գերմանուհու քիթ տեսայ, որ, ինչ Սիփան, Մասիսից էլ մեծացել էր. դէհ, արի ու մեր քնքուշ սեռին համոզիր, որ չըսարսափէ ֆինդինկայից, ա՞խր ինչպէս կարելի է։ Նա, որ ամբողջ ժամերով կանգնած հայելու առջև աշխատել է երեսի վրայի փոքրիկ բծերը շըտկել, կամ ծածկել ամենակարող սպիտակ ներկով, ապա նա ինչպէս կարող է համաձայնուել, որ իր քիթ ու. պրոունդին ֆինդինկա դուրս գայ, այդ հօ կատարեալ մահից էլ վատ է, բայց ինչ արած, բնութիւնը այդպէս է տրնորինել, իսկ բժշկականութիւնը դեռ ոչ մի հնար չէ գտել առողջացնելու։

Անցեալները բարեկամներից մէկին հարցնում եմ.

—Ի՞նչու Ասխաբադում այսքան ամուրի երիտասարդներ ու ծերեր կան, մինթէ սրանք չեն պսակուում։

—Է՞, եղբայր, ինչեր ես ասում. այստեղ, դիտես որ աղջիկը շատ սակաւ է, իսկ Ղարաբաղից էլ, երբ լսում են որ Ասխաբադ ես ապրում, աղջիկ չեն տալիս։ Ճշմարիտն ասած, աղջկերքը իրանք չեն ցանկանում գալ—ահա պատճառը, և ո՞վ կըցանկանայ, որ ֆինդինկայի խաչը իր վրան կրէ։

Այս է իմ բարեկամի կարծիքը տեղիս ամուրիների մասին, իսկ մերը թողնում ենք միւս անգամին։

Վ. ա հ է

Քնադատական

Գրականութիւն եւ մամուլ

—

„Այն հին առածը—ասում է Новости—թէ իւրաքանչիւր մարդ ինքն է իր բախտը ստեղծում—սկզբունքով բոլորովին արդարացի է։ Եւ նրա մէջ գտնւած ինքնօգնութեան ցուցմունքը, թէ ուրեմն իւրաքանչիւր ոք պիտի զարգացնէ և գործ դնէ իր բարոյական ու մտաւոր ոյժերը, անպայման նշանակութիւն ունի, որպէս ամեն մէկ անհատի համար մասնաւորապէս, նոյնպէս ամբողջ տնտեսական կեանքի համար ընդհանրապէս„։

Այդ ճշմարտութեան շօշափելի օրինակները շարունակ կարելի է գտնել կեանքի մէջ։ Տեսնենք թէ օրինակ ինչպէս և ստեղծում իր բախտը անգլիացի կինը։

„Վարժուհիները կարող են ստանալ 2000 ռուբլի տարեկան։ Տնային դաստիարակչուհիները ստանում են մինչև 1000 ր. տարեկան, բացի սենեակից և ուտելիքից։ Ներկայումս Անգլիայում 124,000 կանայք զբաղած են երեխաների կրթութեամբ։ Գրող մեքենաների և ստենոգրաֆի վրայ աշխատելով շատ անգլուհիներ գտնում են իրանց ապրուստը։ Սրանք շաբաթական ստանում են մինչև 14 ռուբլի։ Վերջապէս պոստ-հեռագրական վարչութիւնն իր ծառայողների մէջ հետզհետէ աւելացնում է կանանց թիւը, վարձատրելով շաբաթական հինգից մինչև քառասուն ռուբլի։

Բայց մենակ անգլուհին չէ, որ ուժգին կերպով մտել է տնտեսական գործունէութեան ասպարէզը. ռուս կինն էլ արդէն սկսել է հետևել նրան։ Ահա թէ ինչ է գրում այդ մասին Биржъ. Вѣд. թերթի Վիլնայի թղթակիցը.

„Ոչ մի տեղ կանայք այնպիսի կարեւոր դեր չեն կատարում, որպէս այստեղ։ Շրխսսելով դեռ գլխարկի, հացարանների, քաղցրավաճառների և այլ խանութների մասին, մեզանում կանայք տիրապետում են ամբողջ առևտրական ասպարիզին։ Հավիւ թէ կարելի է սխալ համարել, որ իրերի այդ դրութիւնը, անընդհատ զբաղմունք տալով ջահել կանանց ահագին թիւին, բարերար ազդեցութիւն է անում կանանց սեռի բարոյականութեան վրայ„։

Ուրեմն ամենուրեք կինը հետզհետէ աշխատաւոր է դառնում։ Իսկ ինչ է անում արդէն ի բնէ աշխատասէր հայ կինը։ Տեսնենք թէ ինչ է պատմում այդ մասին Նոր-Դարի Բաղի թղթակիցը.

„Երկար ժամանակ սաղիանցի հայ կինն անգործ մնալուց յետոյ, սկսում է միջնորդի դեր կատարել։ Նա այս և այն անմեղ կանանց միտքը յեղաշրջելով գցում էր թուրքերի գիրկը, ստանալով վերջիններից ճոխ վարձատրութիւն։ Այսօր տասնեակ կանայք կան, որոնք շնորհիւ այդ կնոջ և իր նմանների՝ թէ թուրքերի մօտ և թէ հիւրանոցներումն են ապրում...„

Ուրեմն կատարեալ անկում։ Եւ այդպիսի հանդամանքների մէջ ինչ է մտածում հայ հոգևորականը, ուսուցիչը, ինտելիգենտը... Թողնենք որ հարցին պատասխանէ Մշակի Երևանի թղթակիցը.

„Երևակայեցէք ձեզ մի գաւառական քաղաք, որտեղ կայ ժողովարան։ Դահլիճում խաղում են „Թուղթ խաղացողի կեանքը„։ Անտրակտի ժամանակ դուք՝ լի ատելութեամբ դէպի թուղթ խաղացողը դուրս էք գալիս միջանցք. բայց դռներից երևում են ընթերցարանը բոլորովին դատարկ, իսկ կանայ սեղանների շուրջը նստած են ձեզ ծանօթ մարդիկ. կալուածատէրներ և պաշտօնեաներ հետ միասին վաստաբան հոգաբարձուն, դպրանոցի ուսուցիչը, պստուաւոր վաճառականը, անւանի բժիշկը և այլն։„

Ուրեմն երբ ամբոխը ինքն իրան անդունդ է գլորում, իսկ նրան առաջնորդելու կոչւածները կեանքը կատակ են դարձրել, ինչ պէտք է սպասել այդ բոլորից.. Սթափւել է հարկաւոր, քանի դեռ ուշ չէ...

ՊՐՈՖԷՍՈՐ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

—

Հեռագիրը զուժեց կրկին մի ցաւալի լուր։

Ամսոյս 10-ին Գերմանիայում վախճանուել է պրոֆէսոր Անդրէաս Արծրունի, Գրիգոր Արծրունու եղբայրը։ Հանգուցեալը մէկն էր հայ ազգի այն որդիներից, որոնք հայրենիքում չըգտնելով իրանց ցանկացած գիտական ասպարէզը, ստիպւած են լինում չըհեռանալ եւրոպական համալսարաններից և այնտեղ իրանց ոյժերի չափ աշխատել ընդհանուր գիտութեան ասպարիզում։ Բայց Անդրէաս Արծրունին ժամանակաւ ժամանակ յայտնւում էր Մշակի էջերում։ Նրա այդ յօդւածները միշտ ուրախութեամբ և հետաքրքրութեամբ էին կարդացւում։

Միւս անգամ կըտանք նրա պատկերը ու մի յօդւած կընուիրենք նրա գրական գործունէութեան մասին։

Դպրոցական

Ախալքալաքում բացուել են արական և իգական քաղաքային ծխական դպրոցներ, հայոց նախկին ուսումնարանների փոխարէն։ Ընդունւած են 200 երեխաներ։

—«Черн. Вѣст.» հաղորդում է.

«Մտադրութիւն կայ այս օրերս Բաթումում հայոց եկեղեցական-ծխական ուսումնարան բաց անելու։ Ինչպէս յայտնի է, հայոց ուսումնարանները, որոնք չըկամեցան հպատակել լուսաւորութեան նախարարութեան կարգադրութեան՝ փակուեցին։ Ներկայումս հայոց հոգևորականութեան արած սխալը զգացուած է և ուսումնարանը բացւում է նորից կառավարութեան կարգադրութեան հիմունքներով։ Չէ կարելի չ'ողջունել հայոց ուսումնարանի կարգադրիչների վճիռը, որ հպատակում են կառավարութեան իրաւացի պահանջներին։ Իւրաքանչիւր նոր ուսումնարան,— առհասարակ ուսումնարանների սահմանափակ թիւի ժամանակ, երբ բացւում է բոլոր օրինական պահանջները պահպանելով և դրւում է ուսումնարանական բարձրը իշխանութեան հսկողութեան տակ, անկասկած ցանկալի է։

—Եւրոմտի նախարարութիւնը հաստատել է Թիֆլիսում բացւելի վաճառականական դպրոցի կանոնադրութիւնը։ Դպրոցը, որ հիմնւում է Թիֆլիսի վաճառականական ընկերութեան միջոցներով, կունենայ 7 դասատուն բացի պատրաստականից։ Ուսումնարանում կընդունւեն բոլոր դասանութիւնների և դասակարգերի երեխաները, բայց առաւելութիւն կըտրւի վաճառական դասակարգին։ Ուսումնարանը աւարտողները կունենան նոյն իրաւունքները, որ ունին ռէալական դպրոց աւարտողները։ Բացի ընդհանուր առարկաներից, դպրոցում սովորելու են՝ վաճառականական թուաբանութիւն, հաշուապահութիւն, վաճառականական նամակագրութիւն ռուսաց և օտարազգի լեզուներով, քաղաքատնտեսութիւն, օրէնսդիտութիւն, տարրալուծութիւն և ապրանքագիտութիւն տեխնոլոգիայի հետ, նոյնպէս գործնական աշխատանքներ տարրալուծութիւնից և ապրանքագիտութիւնից, վաճառականական աշխարհագրութիւն և գեղագրութիւն։

ԼՐԻՐԵՐ

Այսօր, սեպտեմբերի 13-ին Վանքի մայր եկեղեցում, առաւօտեան 10 ժամին, հոգեհանդիստ է կատարւելու Հոհենհոննեֆում (Գերմանիա) նորոգ վախճանուած պրոֆէսոր Անդրէաս Արծրունու յիշատակին։

Պ. Սմբատ Շահազիզ ուղարկել է ի յիշատակ իր նախկին աշակերտների Հայոց Բարեգործական ընկերութեան 2000 ռուբլի, խնդրելով աւելացնել «Աբովեան-Նազարեան» գրականական դումարի վրայ։

—

Սեպտ. 6 ին Բագուից Թիֆլիս եկաւ շահի կրտսեր որդի Զօռ-Սալթանէ-Մանսուր-Միրզան, որ գնում է արտասահման բժշկելու։ Բագում թագաւորազնը հիւրասիրուեց և գիշերեց Պարսկաստանի նշանաւոր վաճառական Թումանեանցների տանը։ Նորին բարձրութեան շքախումբը կազմում են Միրզա Աբդուլրահման և Միրզա-Ալապկեար խաները, հայազգի Արշակ խանը և բժիշկ Միրզա Խալիլ խանը։

—

Մտադրութիւն կայ լայնացնելու Կովկասի ժողովրդական բանաւոր դատարանների իրաւասութիւնը, յանձնելով նրանց բոլոր քրէական գործերը տեղացիների վերաբերեալ, գինուորական-ժողովրդական հողի վրայ։ Այդ ծրագիրն արդէն անցած է պետական խորհրդին։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի Հայոց բարեգործական ընկերութեան գրադարանը շատ անհոգ դրութեան մէջ է։ Նրա ղեկավարները երբէք չեն մտածում նրա մասին, որ գրադարանը ոչ մի յառաջադիմութիւն չէ անում։ Նոյն իսկ գրացուցակները սարսափելի խառնակ դրութեան մէջ են և նրանց նայելով չէ կարելի ուղիղ գաղափար կազմել գրադարանի մասին։ Նոյնպէս բոլորովին ի նկատի չեն առնում ընթերցող հասարակութեան շահերը։ Շրկայ մի կանոնաւոր ցուցակ, որով կարողանայիք հեշտութեամբ գտնել ձեր ցանկացած բովանդակութեան գիրքը։ Եթէ օրինակ դուք որոնում էք որև է ձեռնարկ միջազգային իրաւունքի մասին, ստիպուած պէտք է լինէք ամբողջ ձեռագիր ցուցակը գլխից մինչև տակը կարդալ, ուրեմն մի քանի հազար գրքերի վերնագիրները ընթերցանել, մինչև գտնէք ձեր ցանկացածը։ Իսկ եթէ ուղղակի գրապահին հարցնելու լինէք, նա կըպատասխանէ, թէ «այդպիսի գրքեր գրադարանը չունի», մինչդեռ երկու կամ երեք ժամ քրքրելուց յետոյ դուք կըգտնէք այն։

—

Ռուսաց հոգևորականութիւնը հերթա է դարձրել քաղաքային և գիւղական եկեղեցիներին կից «փողոցային գրադարաններ» հիմնելու հարցը։

—

Պետերբուրգի յամրուկոյրերի դպրոցի վարչութիւնը սկսել է տեղեկութիւններ հաւաքել ամբողջ կայսրութեան յամրուկոյրերի քանակութեան և դրութեան մասին և այն միջոցների մասին, որ գործադրւում են նրանց կրթելու և արհեստներ սովորցնելու համար։ Այդ տեղեկութիւնները ստանալուց յետոյ վարչութիւնը մտադիր է մշակել յամրուկոյրերի ընդհանուր ուսուցման հարցը։

—

Կիրակնօրեայ և տօնօրեայ հանգստութեան հարցը պարզաբանելու համար կազմուած է մի յանձնաժողով, որ ամենօրեայ նիստ ունենալով, մոտ մի տարեայ ընթացքում հազիւ կարող է պարզել այդ դժուար և բարդ հարցը։

—

Ժողովրդական համալսարանների գործը կանգ չէ առնում։ Պետերբուրգի քաղաքագլուխը մտադիր է լուրջ ուշադրութիւն դարձնել մայրաքաղաքում ժողովրդական դասախօսութիւններ կազմակերպելու գործին։ Մտադրութիւն կայ կառուցանել առանձին շէնքս լայնատարած լսարաններով սոյն նպատակի համար։

—

1898 թիւն Տերեկի և Կուբանի շրջաններից և Անդրկովկասից վերցնելու են 5,600 զինուորներ, հաշուելով նոյն թիւի մէջ 100 հոգի օսեր, որոնք նշանակուած են Տերսկի կոզակային զօրքի գնդերի մէջ ծառայելու համար։

—

Ռուսաց լեզուն օտարազգիների մէջ տարածելու համար, մտադրութիւն կայ առանձին մասնաժողովներ կազմակերպել, որոնց հսկողութեան կենթարկի տեղացիների ժողովրդական կրթութեան գործը։

—

Բագուի կալաճատէր Թումայեանց, քաղաքային վարչութիւնից իրաւունք ստանալով, իր հաշուով ասֆալտում է իր տան առաջ ձգուած Կոլիբակինեան փողոցը։ Ծախս կընստի 2000 ռուբլի։

—

Բէրգէնի միջազգային ցուցահանդեսում կովկասցիներից նեստեաեայ անձինք նշան են ստացել։ Փիթոյեան եւ ընկ. (Թիֆլիսից) ստացել է ոսկեայ մեդալ. ողնանիլի (ձուկ) եւ սեղմած ձուղպի համար։ Սարոխանեանց (Բագից) եւ Քամոյեանց (նոյնպէս Բագից) արժանացել են արծաթեայ մեդալների նոյն բաների համար։ Մայիլեան (Բագից) ստացել է շնորհակալութեան դիպլոմ օգտակար գործունէութեան համար։

Գրական նորութիւններ

Մտադրութիւն կայ հրատարակելու մի նոր լրագիր, որ նվիրուած կըլինի Կովկասի շահերին։ Լրագիրը պիտի հրատարակւի ռուսաց, հայոց և վրաց լեզուներով։

—Զուտով սկսելու է հրատարակուել Պետերբուրգում մի շաբաթաթերթ, որ մասնաւորապէս նվիրուած կըլինի Ռուսիան արևելքի հետ մօտեցնելու հարցին։

—Պատրաստւում է Լերմոնտովի «Мцыри» աշխատութեան պատկերազարդ հրատարակութիւնը։ Լերմոնտովի բոլոր գրուածները առաջին անգամն են պատկերազարդ հրատարակւում։ Պատկերները պատկանում են Տէր-Ասատուրեանի վրձինին։

Դիտական նորութիւններ

Զուտով Պետերբուրգում փորձելու են նոր հնարուած օդապարիկ-նաւը, որ ամբողջովին շինուած է ալիւմինից։ Թէ ինչ գօրութեամբ է շարժւելու օդապարիկ-նաւը, առայժմ գաղտնիք է մնում։

— Որովհետև ներկայիս պատերազմական նաւերը առանց այն էլ մեծ քանակութեամբ էլեկտրական ոյժ ունին պահած, ուստի հարց է ծագել ունենալ նրանց մէջ էլեկտրական ինքնաեռներ և թէյամաններ։

ՀԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Օտարազգի գումարատէրերն իրաւունք են խնդրում նախարարութիւնից՝ Սև ծովի ափերով էլեկտրական երկաթուղի անցկացնելու այն տեղերով, ուր գնում են հիւանդները կազդուրւելու համար։

—Զուտով քննելու է Կովկասեան շղթայով երկաթուղի անցկացնելու խնդիրը։

—Բաթումի նաւահանգիստը բարւոքելու համար, որոշուած է հինգ միլիոն ռուբլի։

Խառն լուրեր

Կրէտէում դրութիւնը չէ փոխւել։ Կանդիան տակաւին գտնւում է մահմեդականների ձեռքին։ Էդհէմ փաշան յանձնել է Ծովապետ Նօէլին մի քանի տասնեակ «յանցաւորներ»։ Բայց հետազօտութիւնները ցոյց են տւել, որ դրանց մէջ չկան իսկական յանցաւորները։ Այդ, ի հարկէ, կարելի էր հէնց առանց հետազօտութեան էլ իմանալ։ Մենք հաւատացած ենք, որ յանձնուած իբր-յանցաւորների մէջ շատերը բոլորովին արդար են և շատերն էլ գուցէ կոտորածին հակառակ եղողներն են, որոնք այժմ պատժւում են Նօէլի ձեռքը յանձնելով։ Մի ուրիշ կտրական բայլ չէ արւած Կրէտէի գործում։ Նորից սկսել են խօսել, թէ չըլինի, որ Գերմանիան և Աւստրիան կրկին միանան չորս պետութիւններին և այլն։ Ուրիշ խօսքով ասած՝ կամենում են մէկ էլ նորից խաբել կրէտացիներին, որից յետոյ Գերմանիան նորից կըխռովէ և այդպէս մինչև աշխարհքի վերջը։ Երբ մի տան եօթը կին է լինում, մնում է առանց ալելու...

—Խաղաղութեան և զինադադարի հարցին բոլոր պետութիւնները համակրանքով են վերաբերւում։ Փոքրիկ պետութիւններից ոմանք արդէն պաշտօնապէս յայտնել են իրանց համաձայնութիւնը։ Գերմանական, աւստրիական և իտալիական կառավարութիւնները պատրաստում են դրական պատասխան կոմս Մուրաւիեւին ներկայացնելու համար Երեքն էլ միևնոյն խօսքերով յայտնելու են, թէ երեքպետեան դաշնակցութիւնը միշտ ի նկատի է ունեցել միայն խաղաղութեան պաշտպանութիւնը (բայց ինչ միջոցով), ուստի և նրան կազմող պետութիւնները առանց այլևայլի ընդունում են Ռուսիայի առաջարկութիւնը և պատրաստ են օգնելու նրան այդ գործի մէջ իրանցից կախուած բոլոր միջոցներով։

—Ֆիլիպէի վիլայէթում այրել են մի հայկական գիւղ և մի քանի հայեր են սպանել։ Ռուսաց և ֆրանսիացոց դեսպանների պահանջման համեմատ հեռացրուած է Ֆիլիպէի նահանգապետը և Բերանում «քննութիւն» կատարող յանձնաժողովին հրամայուած է խիստ գնալ նոր անկարգութիւնների տեղը և խիստ քննութիւն կատարել։ Միւս կողմից յայտնում են, որ Օրմանեան պատրիարքին կանչեցին Ելդըզ-Քէօշք, ուր Թաքսիմ-բէյ ակնարկեց հայերի (մեղայ բեզ, տէր) անկարգութիւնների մասին, և խնդրեց ազդեցութիւն գործել իր ազգակիցների վրայ։

—Դրէյֆուսի գործի վերաքննութիւնը հաւանական է դառնում։ Լուր կայ, որ այդ պատճառով նախագահ Ֆորը մտադիր է հրաժարւել իր պաշտօնից։ Ինչպէս երևում է, այդ գործի մէջ խառն է գերմանական դեսպանատունը։ Իբր թէ ֆրանսիացիք գողացել են գերմանական դեսպանատնից, Վիլհելմ կայսրի նամակը, ուր չիշած է Դրէյֆուսի անունը։ Երևի գաղտնի դոկումենտ ասելով, այդ էր հասկացւում։ Բայց այն կարծիքն է յայտնւում, թէ այդպէս անւանած «Վիլհելմ կայսրի նամակը» նոյնպէս կեղծիք է։ Ուրիշ հարց է, թէ սրան կեղծողը ֆրանսիացիք են, թէ գերմանացիք։ Յամենայն դէպս դատարկ խօսք է, թէ սոյնանման գաղտնիքների բացւելուց պատերազմ կըծագէ։ Պատերազմի համար շատ աւելի յարմար առիթներ կան, սակայն նա չէ ծագում, որովհետև տակաւին ոչ ոք տրամադիր չէ պատերազմելու։ Երբէք «առիթներից» պատերազմներ չեն ծագում, այլ երբ պատերազմելու ցանկութիւն կայ, առիթը որոնում են և խկոյն գտնում։

—«Հաւասի» գործակալութեան հեռագրում են Պոլսից հետևեալը. «Վիլհէլմ կայսրը կայցելէ ոչ միայն Պալեստինը, այլ և Հէյրութն ու Դամասկոսը։ Նա մինչև անգամ ցանկութիւն է յայտնել ձիով կատարել այդ ճանապարհորդութիւնը, բայց նրա միտքը փոխել են, բացատրելով ճանապարհի չափազանց երկարութիւնը։ Եւ իսկապէս ճանապարհները այնտեղ ոչ մի բանի պէտք չեն (աւազակութեան պէտք են՝, որովհետև գանձարանում փող չկայ նրանց նորոգելու համար։

—Պոլսի անգլիական նոր դեսպան Օ'Կոննորն ունկնդրութիւն է ունեցել սուլթանի մօտ, որ տևել է մի ժամից աւելի և որին ներկայ է եղել նոյնպէս արտաքին գործերի նախարարութիւնը։ Պոլսի քաղաքական շրջաններում Օ'Կոննորին շատ նուրբ քաղաքագէտ են համարում և կարծում են, թէ նա պիտի հերթական դարձնի հայոց հարցը։

ԱԶՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԱՆՑ ՄԵՍԻՆ

Մեզանում կանայք միայն նրանով են իրանց գեղեցկութիւնը պանպանում, որ երբէք ոչինչ չեն մտածում։

Ա. Ն. Օստրովսկի

Գովեցէք կնոջ գեղեցկութիւնը, եւ նա կրնեռէ ձեր հացրած բոլոր վիրաւորանքները։

Բուլուս

Կանայք հագիւ են նեռում մէկը միւսի առաւելութիւնը գեղեցկութեան մէջ։

Ժանեկնի

Կանանց մեծամասնութեան համեստութիւնը սկսւում է այնտեղից, ուր վերջանում է գեղեցկութիւնը։ *Ալֆ. Կարր*

Կնոջ արժանաւորութիւնների մասին դատելիս պիտի սպասել, մինչեւ որ նա կորցնէ իր գեղեցկութիւնը։ *Տիկ. Միրեր*

Կնոջ համար, իմներեղ գիտէք, աւելի հեշտ է համբուրել սատանայի հետ—քան նեռի մեզ ասել՝—բան ուրեւէ մէկին գեղեցկուհի անուանել։ Ն. Վ. Գոգոլ

Լաւ բնաւորութիւնով ամուսնուելու տգեղը գերադասւում է փոքրկալից բարք ունեցող գեղեցկուհուց։ *Մարիր*

Ժամանակաւոր խմբագիր՝
Աւետիք Արասխանեան
Հրատարակիչ՝
Տիգրան Նազարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից՝

Առաւօտեան

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վենեռական (սիֆիլիս) եւ միզասեռ. հ.

Կ. Մ. Շիկովանի—9—10 ժ. աչքի, ականջի եւ քարդային հ.

Կին-բժիշկ Ա. Ի. Բուդենկո—10—11½ ժ.: կանանց եւ երեխ. հ. ծաղկի պատուաստումն:

Զ. Ի. Բաբանասեանց—11½—12 ժ. կ. հ.:

Ի. Ֆ. Պրոտասեւիչ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի եւ կրծքի հ.

Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ականջի եւ երեխայոց հ.

Ա. Դ. Գուրկո—1½—2½ ժ. ականջի եւ միզասեռական հ.

Երեկոյեան

Ա. Մ. Փուղինեան—6 ժ. ականջի եւ երեխայոց հ.

Բ. Ա. Նաւասարդեան—6½—7 ժ.

Ա. Ն. Զպակովսկի—6—7 ժ. ականդային (էլեկտրաբուժութիւն), վեներ. եւ մորքի հ.

Տ. Ի. Բուդենկո հիւանդանոցում քիմիական եւ խոշորացուցական հետազօտութիւններ է անում մեզի, խիխ, արեան, կաթի եւ այլն:

Վճար 50, կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) եւ օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Նաւասարդեան

Անդրկովկասեան երկաթուղի

Մարդատար գնացքների երթեւեկութիւն

Կայարաններ	Դուրս է գնում			
	Բաքուից-Բաթում		Բաթումից Բաքու	
			Բաքու հաս.	
Բաքու	4.05	12.20	12.59	5.45
Ելախ	12.15	9.24	4.58	7.56
Գանձակ	2.37	11.54	2.55	5.45
Ադստաֆա	5.32	3.18	11.51	2.00
ԹԻՖԼԻՍ	9.10	7.48	9.05	10.58
Գորի	11.32	10,33	6.18	6.57
Միխայլովո	12.56	12.02	5.00	5.41
	Բաթում է հասնում			
Բաթում	8.47	8.38	8.20	8.35

Գանձակ. Սեւ բաճանները գիշեր են:

Թիֆլիս հասնում են գնացքները՝ Բաթումից 8 ժ. 22 ր. երեկ. և 9 ժ. 07 ր. առ., Բաքուից՝ 8 ժ. 26 ր. առ. և 6 ժ. 33ր. երեկ. Թիֆլիսից գնացքը դուրս է գալիս՝ Բաթում 9 ժ. 10 ր. առ. և 7 ժ. 48. եր. Բաքու 9 ժ. 05 երեկ. և 10 ժ. 57 ցերեկ.:

ԱԼԲՈՄ-ԱԼՄԱՆԱԽ

ԳԻՆԸ 2 ր. Աղբիւրի և Տարազի բաժանորդների համար 1 ր. 25 կ.:

Դիմել՝ Тифлисъ, Агбюръ կամ Таразъ.

«Մշակի» խմբագրութիւնը յայտնում է ի գիտութիւն հասարակութեան, որ սեպտեմբերի 10-ին Հոհենհոննեֆում (Գերմանիա) վախճանուեց «Մշակի» հրատարակիչ՝ պրոֆէսոր

ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

Հոգեհանգիստը կըկատարուի այսօր, սեպտեմբերի 13-ին, Վանքի մայր եկեղեցում, առաւօտեան 12 ժամին: 1—1

Լոյս տեսաւ առանձին գրքոյկով

Ս. ԹԱՌԱՅԵԱՆՑԻ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

ԳԻՆՆ Է 40 կոպ.

Կարելի է ստանալ Տարազի խմբագրատանը և Կենդրոնական գրավաճառանոցում, իսկ Բագու եղբ. Թառայեանցների գրավաճառանոցում: 10—1

МАГАЗИНЪ

Золотыхъ и бриллiантовыхъ издѣлiй

БАРСКАГО

(Головинскiй проспектъ)

Открыто отдѣленiе оптическихъ товаровъ, самыхъ изящныхъ пенснэ и очковъ золотою и черепаховою оправою. Отпускаю по рецептамъ окулистовъ. Также принимаю въ починку разныя очки и пенснэ. Продажа биноклей.

ПОСПѢШИТЕ ВЫПИСАТЬ!

ПАНТОГРАФЫ для увеличенiя и уменьшенiя рисунковъ, плановъ, чертежей и проч. Цѣна **3, 4, 5, 8, 10** руб. и дороже, смотря по величин. увел. или уменьшенiя въ 5, 6, 7, 8, 10 разъ и болѣе.

Волшебные фонари лучшихъ фабрикъ съ интересными картинами и прекрасно увеличивающiе: **2, 3, 4, 5, 6, 8, 10** и до **100** руб. Примѣчанiе: *фонари* отъ **6** руб. **имѣютъ 12 картинъ** (серiй) на каждой по 4 и 5 изображенiй (всего отъ 48—60) **2 передвижныя картины** и **одинъ хромотропъ.**

Волшебные фонари. Для *школъ и народныхъ чтенiй*, въ **10, 12, 15, 20, 25, 30, 40, 50** и до **100** руб.

Камера Обскура. Для рисованiя съ натуры лицъ, видовъ, животныхъ, ландшафтовъ и проч. Рекомендуется какъ взрослымъ и учащимся, такъ и дѣтямъ, для развитiя художественнаго вкуса. Цѣна **3** руб. вмѣстѣ съ наставленiемъ.

Дальнозоръ замѣняетъ *подзорныя трубы* и *бинокли*, показываетъ предметы на большiя разстоянiя, укладывается въ жилетный карманъ и весьма практиченъ. Цѣна **3** руб.

Фотографическiй аппаратъ, посредствомъ коего каждый, даже ребенокъ, сейчасъ можетъ снимать портреты, виды, ландшафты и проч. Цѣна только **5** рублей.

Заказы въ провинцiю высылаются немедленно по полученiи 3-хъ р. задатка.

Адресъ. **С.Петербургъ, складъ Новыхъ изобрѣтенiй.** Большая Морская 33. 1—1

Дозв. ценз. Тифлисъ, 12 сентября 1898 г. *Տպարան Կ. Մարտիրոսեանցի* Тип. К. И. Мартиросiанца. Орбел. ул., № 1—2.